ԵՐԿԻՐ

ԱՊՐԻԼ 12-18
2002

#3

Արժեչափերի անկում

Հասարակության կյանքի մի բնագավառում արժեչափի անկումն անխուսափելիորեն իջեցնելու է մյուս բնագավառների արժեքային չափանիշների մակարդակը:

Բայց ամենափխուրն այն է, որ ցինիզմը որպես ինքնադրսեւորման հիմնական միջոց օգտագործող նույն անձինք դժգոհում են ժողովրդից: Բողոքում են, որ ժողովուրդն ընտրություններում իր ձայնը վաճառում է, որ ժողովուրդը ապաքաղաքական կեցվածք ունի եւ անտարբեր է պետական ու քաղաքական կյանքի հանդեպ: Բայց չէ՞ որ հենց իրենք են ժողովրդին հասցրել այդ վիճակին, չէ՞ որ հենց իրենց ցինիզմն է ժողովրդին զզվեցրել եւ օտարել քաղաքականությունից ու պետությունից:

Ենթադրվում էր, որ մեզանում ամբողջ թափով ընթացող նախընտրական քարոզարշավը պետք է որոշակի թարմություն, նաեւ՝ բովանդակություն մտցներ հայրենի քաղաքական կյանքում շրջանառվող թեմաների ու խնդիրների գունապնակի մեջ: Քանզի ենթադրվում է, որ ընտրություններում հասարակության վստահությունն ու աջակցությունը ստանալու համար հայրենի քաղաքական ուժերն ու գործիչները պետք է ջանան հանդես գալ առկա բազում հիմնախնդիրների լուծմանը միտված ծրագրերով: Սակայն, ցավոք, գոնե այս պահին, գաղափարների ու ծրագրերի, առաջարկների ու լուրջ քննարկումների փոխարեն, հաճախ ականատես ենք դառնում շատերի կողմից կիրառվող՝ քաղաքական կյանքի ահագնացող ցինիկության իրողությանը: Ցինիզմի բոլոր դրսեւորումներն են տգեղ, բայց առավել տգեղ ու նաեւ վտանգավոր է ցինիզմի քաղաքական տարատեսակը: Մի երեւույթ, որ, ցավոք, միտում ունի դառնալու մեր իրողության անքակտելի բաղադրիչը, ընդ որում՝ բոլոր բնագավառներում:

Դատեք ինքներդ. արդյո՞ք ցինիզմի հրապարակային դրսեւորում չէ այն իրողությունը, որ հետախուզման ու փախուստի մեջ գտնվող Վ. Սիրադեղյանն այսօր առաջադրվում է Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու: Սա, անշուշտ, ածանցյալ մի դրվագ է այն ցինիզմի, որով ՀՀԾ-ն այսօր հավակնում է իշխանափոխություն իրականացնել երկրում: Ինչ խոսք, չենք կարծում, թե որեւէ քաղաքական կազմակերպություն կամ անհատ գործիչ, այդ թվում՝ ՀՀԾ-ն ու նրա շրջապատը, իրավունք չունեն հավակնել իշխանություն վերցնելուն, կամ ընդհանրապես դատապարտելի ցինիզմ է իշխանության գալուն միտված քաղաքական գործունեությունը: Բնավ ոչ: Խնդիրը լոկ այն է, որ տվյալ քաղաքական ուժը որեւէ չափով չի ուզում ընդունել որպես իշխող քաղաքական ուժ տարիներ շարունակ իր իրականացրած քաղաքականության սխալների, ձախողումների, ձեւախեղումների մասին որեւէ կարծիք: Ավելին, եթե փորձենք մեկ նախադասությամբ ամփոփել իրենց արած-չարածին ՀՀԾ-ի վերաբերմունքը, ապա դա կհնչի մոտավորապես այսպես. «Ճիշտ ենք արել, լավ ենք արել»: Եվ եթե սա քաղաքական հրապարակային ցինիզմ չէ, ապա ի՞նչ է:

Թող տպավորություն չստեղծվի, թե քաղաքական ցինիզմը դրսեւորվում է միայն որեւէ կոնկրետ քաղաքական ուժի կամ գաղափարների կրողների կողմից:

Ցավոք, այս ախտը չի ճանաչում կուսակցական, գաղափարախոսական, կողմնորոշումային սահմաններ եւ առկա է քաղաքական դաշտի թե՛ իշխանական ու իշխանամետ, թե՛ ընդդիմադիր շատ հատվածներում:

էջ 3

Սովերոտ քաղաքացիություն

Հունվարի 1-ից Հայաստանում եւս գործում է «Իշխանության մարմինների, ղեկավար աշխատողների գույքի եւ եկամուտների հայտարարագրման» օրենքը. մի բան, որ աշխարհի բազմաթիվ երկրներում վաղուց արդեն կիրառելի է: Առաջին հայացքից, օրենքի հաստատումը եւ գոյությունը համոզիչ է թվում այն տեսանկյունից, որ հասարակությունը կտեղեկանա բարձրաստիճան պաշտոնյաների ունեցվածքի չափերի մասին, ու թվում է, թե սա իսկապես ռեալ քայլ է հասարակության եւ իշխանության միջեւ թափանցիկության ապահովման ուղղությամբ: Իսկ ի՞նչ օրենք է հաստատվել իրականում. թքերի, պաշտոնատարներին իրենց եկամուտները թաքցնելու հնարավորություն ընձեռող: Օրենքը չի նախատեսում ամենաառանցքայինն ու կարեւորը ծախսերի հայտարարագրումը, ինչը միայն հնարավորություն կտար ժողովրդին տեղեկանալու, թե որ պաշտոնյան ինչքան ունեցվածք եւ գույք ունի:

Ի դեպ, ծախսերի մասը հաստատված է բոլոր այն երկրներում, որտեղ գործում է այս օրենքը: Այսպիսով գործադիրը, պաշտոնյաների շահերի պաշտպանի կեցվածքով, փորձում է «սեւը» «սպիտակ» դարձնել միաժամանակ ջանքեր թափելով ապացուցելու, որ օրենքը այնքան էլ անկատար չէ: Ըստ պետեկամուտների փոխնախարար Արմեն Ալավերդյանի, «խիստ պատասխանատվություն չի նախատեսում օրենքը, եւ այս փուլում իշխանավորի համար բարոյական պատասխանատվության խնդիր է միայն դրված»: Եթե այս ամենը լսի Հայաստանից անտեղյակ մեկը, կկարծի, թե մեր երկրում մարդիկ գաղափար անգամ չունեն կոռուպցիայի մասին, եւ որ Հայաստանն է ամենաժողովրդավար երկիրը:

էջ 3

Դիմորդ-2002

«Երկիր»-ը շարունակում է տպագրել պետական բուհերի 2002 թվականի ընդունելության քննությունների առարկաների հարցատոմսերի եւ հարցաթանների նմուշները:

Քաղաքական 2

Արդար հասարակություն

«Պարզ զրույցի փորձ». Դաշնակցության համար հասարակական համերաշխության հիմնաքարը արդար հասարակությունն է: Արդար տնտեսությամբ ու իրավակարգով:

Խորհրդարան 4

Արմենտելյան լաբիրինթոս

Խորհրդարանի առաջիկա եռօրյայում Աժ դատին է ներկայացվելու «ԱրմենՏելի» գործարքն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի զեկույցը, եւ «ԱրմենՏելի» գործարքի բազմաթիվ մութ ծալքեր հրապարակ են գալու:

Հանդիպում 5

Մեծ մարզի մեծ հոգսերը

Աժ ՀՅԴ պատգամավորական խմբակցության հերթական այցը Գեղարքունիքի մարզ էր: Շուրջ 20 գյուղերում տեղի ունեցած հանդիպումների արդյունքում ի հայտ եկան բազմաթիվ չլուծված հարցեր ու հարցականներ:

Տնտեսական 7

Հարկային բարեփոխումները՝ օրակարգում

Հայաստանյան հարկային խճճված համակարգը, միլիոնավոր պարտքերը սպառնում են երկրի բյուջեին: Իրավիճակը արմատական լուծումներ է պահանջում:

Ընկերային 8

Հայ «տուրիստները» արտասահմանում

Հարյուրավոր հայ ընտանիքներ, այսպես կոչված՝ տուրիստական գրասենյակների միջոցով անտառներով ու սարերով անցնում են եվրոպական երկրներ: Բարեկեցիկ կյանքի փոխարեն նրանք հայտնվում են գեկտոներում:

Իրավական 9

ՆԳՆ ներքին գործերը

ՆԳ նախարարությունը որեւէ օպերատիվ-հետախուզական աշխատանք չի իրականացնում տարիներ շարունակ հետախուզվող Ռոմեն Դազարյանին եւ Վանո Սիրադեղյանին հայտնաբերելու ուղղությամբ: Ավելին, այս հարցը նրանց բնավ չի հուզում:

Երիտասարդություն 10

Անունը կա, ամանումը չկա

Հայրենիք-Ափյուռք առաջին խորհրդաժողովի որոշմամբ ստեղծված Համահայկական

երիտասարդական միջազգային կենտրոնը առայժմ գործում է միայն թղթի վրա: Պետությունից հատկացվող գումարների բացակայության պայմաններում նրա աշխատանքը պարզապես խորհրդանշական է:

ملحق أرتاك

ԽՈՍՔ

Հերթական նետված դրոշը

Հայկական լրատվական դաշտի շուրջ քննարկումները եւ զարգացումները նոր շրջապտույտ են ապրում, եւ այս խնդրում ամեն մեկը իր պարտքն է համարում տեսակետ արտահայտել ու դիրքորոշվել:

Բնական է, երբ հասարակական կյանքի կարեւոր տարրերից մեկի՝ չորրորդ իշխանության ազատության եւ իրավունքների մասին քաղաքական ուժերը կարծիքներ են արտահայտում, ինչպես որ մամուլը իրավունք ունի արտահայտվել քաղաքական համակարգի շուրջ: Սա ողջ հասարակության, պետության խնդիրն է, եւ որեւէ մեկը չի կարող պահանջել ու արգելել այս խնդիրների մասին կարծիք հայտնելը: Հակառակ դեպքում կունենանք անազատություն, բայց արդեն հակառակ կողմից: Նման փոխլրացնող վիճակը ձեւավորում է ուժերի հավասարակշռություն, հասարակական կյանքը դառնում է առավել թափանցիկ եւ արդյունքում՝ արդար: Ի վերջո, նման թափանցիկության, հավասարակշռելիության արդյունքում միայն կարող է ձեւավորվել քաղաքացիական հասարակություն: Նույն այս հավասարակշռելիությունը պետք է արտահայտվի մեր երկրի կենսագործունեության բոլոր բնագավառներում: Այս նպատակն է հետապնդում նաեւ քաղաքական համակարգի արմատական բարեփոխման պահանջը, որն արդեն հրամայական խնդիր է:

Այս խնդիրների շուրջ մեր տեսակետը եղել է անսասան, եւ պետք էր պարզապես:

Քաղաքական գործիչների դիրքորոշումների արտահայտությունը պետք է միաժամանակ լինի անկեղծ ու ամբողջական հարցերի վերահանման եւ խնդիրների լուծման իրական նպատակադրմամբ:

Ցավոք, վերջին օրերին ստեղծված իրավիճակը եւ դրանով պայմանավորված շատ կեցվածքներ դրա վկայությունը չեն: Հրապարակում հայտնվում են մարդիկ, գործիչներ, որոնց համար պարզապես հարցի արծարծումը եւ այն իրենց նպատակների համար օգտագործելն է դառնում գերնպատակ:

Հակառակ պարագայում խնդիրը կդառնար շատ ավելի կենտրոնացված եւ նպատակակետին հարվածող, այլ ոչ թե հերթական դրոշ բարձրացնելու մի փորձ, ինչի բուն վերջնակետը ուղղակի քաղաքական, կուսակցական կամ խմբակային նպատակին հասնելն է:

Չես հավատում այդ մարդկանցից շատերի անկեղծությանն ու ազնվությանը, քանի որ, առանց գոնե մեդա գալու, խոսում են երեւույթների մասին, որ կատարվել են առաջին հերթին իրենց ձեռքով: Խոսում են մարդիկ, ովքեր բարձր ամբիոններից բոցաշունչ ելույթներ են ունենում, թե մեր երկիրը պետք է անկախ քաղաքականություն վարի, զերծ հնի օտար միջամտություններից, այնինչ Հայաստանում տարբեր երկրների դեսպանների հետ փակ հանդիպումներում շռայլախոսություններ են թույլ տալիս ներքին գործերին միջամտելու հերթական դրսեւորման առիթով: Կամ մամուլի ամեն մի խոսքի համար (թեկուզ ոչ ճիշտ կամ կեղծ) ամիսներ շարունակ դատարաններից դուրս չեն գալիս լրատվության տվյալ միջոցի բերանը փակելու նպատակով:

Անվստահելի են դառնում կուսակցություններ, որոնց երկու ղեկավարները նույն խնդրի շուրջ իրենց դիրքորոշումները ներկայացնում են տրամագծորեն հակառակ կողմերից: Այս ամենից հետո անհնար է չարձանագրել, որ նրանցից շատերի համար մամուլի ու խոսքի ազատությունը հերթական դրոշակն է, ինչպես որ Սահմանադրությունն էր, Սեղրին կամ այլ վեհ գաղափարներ, որ հնչեցրեցին ու արագ էլ մոռացան: Վաղը լինելու է ընտրական օրենսգիրքը:

Քաղաքականությունը անբարոյականություն չէ ինչպես սիրում են կրկնել բեմերից, պարզապես երբեմն անբարո մարդիկ են զբաղվում դրանով:

Դաշնակցական ազատ անհատը

Աղվան ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՅԴ Ծրագիրը դեռեւս դարասկզբին է ամրագրել անհատի անբռնաբարելի իրավունքները՝ գտնելով, որ քաղաքական գործունեության նպատակը մարդու (անկախ ընկերային վիճակից, սեռից, դավանանքից) լիարժեք զարգացման պայմանների ապահովումն է:

Այսօրվա նյութը ժողովրդավարության էությունն իսկ կազմող մարդու իրավունքների խնդիրն է, անհատ-հավաքականություն հիմնահարցը:

Նախ՝ ինչո՞ւ է հրապարակ նետվում հիմնովին սխալ այն թեզը, ըստ որի՝ Դաշնակցությունը մերժում է անհատի կարեւորությունը, մարդու իրավունքները եւ կողմնակից է զորանոցային, մարդկանց համահարթեցնող հասարակաձեւի: Բանն այն է, որ մարդու անօտարելի իրավունքների հարգումն ու երաշխավորումը համընդհանուր ճանաչում գտած հասկացություն է՝ ներկա քաղաքակիրթ աշխարհի մտահոգության առարկան: Այս ասպարեզում մեզ մեղադրողների նպատակը Դաշնակցության եւ միջազգայնորեն ընդունված արժեքային համակարգերը միմյանց հակադրելն է:

Սակայն այս թեզը տարածողները չգիտեն կամ, ավելի ստույգ, գիտեն, բայց անգիտանում են, որ իր ստեղծման օրերից Դաշնակցությունը (եւ՝ ներկազմակերպական կյանքում, եւ՝ հասարակական գործունեության մեջ) երբեք հավաքականության եւ անհատական շահերը միմյանց չի հակադրել, այլ ձգտել է հավասարակշռել-ներդաշնակել դրանք: Մի կողմից մերժել ու մերժում է հավաքականության (ազգության) իրավունքները անտեսող մոտեցումները, մյուս կողմից՝ պայքարել ու պայքարում է զորանոցային վարչաձեւերի դեմ: ՀՅԴ Ծրագիրը դեռեւս դարասկզբին է ամրագրել անհատի անբռնաբարելի իրավունքները՝ գտնելով, որ քաղաքական գործունեության նպատակը մարդու (անկախ ընկերային վիճակից, սեռից, դավանանքից) լիարժեք զարգացման պայմանների ապահովումն է:

ՀՅԴ ներկազմակերպական կանոնները, որ օրենսդրական սահմանումն են դաշնակցականի իրավունքների ու պարտականությունների, ամենեւին չեն ճնշում անհատի բնական ազատությունները, չեն բռնանում նրա խղճի ու կամքի վրա: Դրանք համատեղ քաղաքական կենսագործունեության վարքի կանոններ են՝ խարսխված բարոյական ու ազգային արժեքների վրա:

Մեր Կանոնագրում անհատ դաշնակցականի իրավունքների պաշտպանության գործակարգերը այնպիսի մանրակրկիտությամբ են մշակված, որ իրավունքների կամայական ոտնահարումը բացառվում է:

Հասարակության մեջ էլ Դաշնակցությունը պայքարում է այդօրինակ սկզբունքների արմատավորման համար: Այնպես որ, անհեթեթ է ՀՅԴ-ին մեղադրել մարդու իրավունքները ստորադասող հասարակարգ կառուցելու նպատակադրման մեջ:

Դաշնակցության ներսում անհատի ինքնադրսեւորման առումով եւս ոչ մի սահմանափակում գոյություն չունի: Ճշմարիտ անհատականություններն արդեն իրենք են կանոնակարգեր ստեղծում՝ հասարակությանը նպատակաուղղելով որոշակի նպատակների իրականացման:

Եթե միայն հետադարձ հայացքով անդրադառնանք, թե վերջին հարյուրամյակում հայ իրականության ամենավառ անհատականություններից քանիսն են դաշնակցական եղել, կամ քանիսն են կանգնել նրա կողքին (մի պահ նաեւ մտածենք, թե ինչպիսին կլիներ պատկերը, եթե հայ հանրության ընթացքը չընդմիջվեր խորհրդային միակուսակցական կենսակերպով), պարզ կդառնա, որ մեր կուսակցությունը միմիայն նպաստել է անհատականությունների զարգացմանն ու ինքնաիրացմանը: Նույնն է հիմա:

Հայտարարություն

Միջին Արեւելքում իրադրությունը դարձել է ծայրաստիճան պայթյունավտանգ: Հետեւանքներն անկանխատեսելի են եւ սպառնում են տարածաշրջանի կայունությանն ու խաղաղությանը: Այս կացության գլխավոր պատասխանատուն համարելով Իսրայելի կառավարությանը՝ խստորեն դատապարտում ենք Պաղեստինի ժողովրդի դեմ ռազմական գործողությունները եւ մեր զորակցությունն ենք հայտնում իր իրավունքների համար պայքարող պաղեստինցի ժողովրդին:

Միանում ենք միջազգային հանրության կոչերին Պաղեստինի գրավյալ շրջաններից անմիջապես դուրս բերելու իսրայելյան զինված ուժերը, հաստատելու զինադադար եւ վերսկսելու բանակցությունները՝ արդար, ամբողջական եւ կայուն խաղաղություն հաստատելու համար:

ՀՅԴ Բյուրո
6 ապրիլի, 2002

ՀՅԴ Բյուրոյի հանդիպումը ՀՀ նախագահի հետ

Ապրիլի 6-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը ընդունել է ՀՅԴ Բյուրոյի անդամներին, որոնց գլխավորում էր Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը:

Երկու ժամ տեւած հանդիպման ընթացքում քննարկվել են տարածաշրջանի վերջին իրադարձությունները եւ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները: Հանդիպումն անցել է ջերմ մթնոլորտում:

Այս օրերին ՀՅԴ Բյուրոն Երեւանում գումարել է իր լիագումար նիստը:

ՀՅԴ Մամլո դիվան

Արժեչափերի անկում

Արսեն ԽԱՉԱՏՐՅԱՆ

էջ 1

Վերջին օրերի իրադարձությունները, կապված խոսքի ազատության եւ, ընդհանրապես, այս ոլորտը կարգավորող օրենքների շուրջ խոսակցությունների հետ, դրա վառ օրինակն են: Արդյո՞ք ցինիզմ չէ, երբ այն խորհրդարանականները, որոնք ծպտուն չեն հանել եւ կամ իրենք են աջակցել հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի գործառույթները որոշող օրենքի ընդունման ժամանակ, այսօր բոլորից բարձր են խոսում այդ հանձնաժողովի գործունեության իրավական թերությունների մասին: Իսկ ցինիզմ չէ՞, երբ խոսքի ազատության մասին գեղեցիկ ելույթներ են ունենում մարդիկ, ովքեր թերթ են փակել, ովքեր թերթի լրագրողի ու խմբագրի են դատի տվել, դրամական փոխհատուցումներ պահանջել: Կամ ինչո՞ւ սահմանափակվենք միայն այս օրենքի օրինակով, քի՞չ են դեպքերը, երբ քաղաքական որոշ գործիչներ կոկորդ են պատռում քննադատելով իրենց իսկ առաջարկած ու ընդունած օրենքները:

Իսկ ուշադրություն դարձրե՞լ եք, թե ինչպիսի ցինիզմով են որոշ քաղաքական գործիչներ, որ միշտ «հպարտացել» են իրենց ռուսամետությամբ, հանգիստ խղճով այսօր հանդես գալիս որպես արեւմտամետության առաջամարտիկներ: Իսկ մի՞թե ցինիզմ չէ, երբ սոցիալիզմի հետ առնչություն չունեցող եւ իրենց լիբերալ համարող որոշ ուժեր ու անձինք այսօր, դռնեդուռ, ընկած արեւմտյան որեւէ սոցիալիստական կուսակցություն են փնտրում, որպեսզի համատեղ կոնֆերանս կազմակերպեն:

Ցինիզմ է, երբ ոմանք արհեստական դաշինքներ ու միավորումներ են ստեղծում, հետո էլ ներքին գզվռտոցները դարձնում հանրության սեփականությունը: Ցինիզմ է, երբ ոմանք, մոռանալով, թե մի քանի օր առաջ ում մասին ինչ են ասել, ում եւ ինչի համար են մեղադրել, հանգիստ խղճով «վեցյակներ» ու «եռյակներ» են ստեղծում նույն մարդկանց հետ:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ԱՐՄԵՆ ՊԱՐԵՆՅԱՆԻ

Ցինիզմ է, երբ ոմանք արհեստական դաշինքներ ու միավորումներ են ստեղծում, հետո էլ ներքին գզվռտոցները դարձնում հանրության սեփականությունը: Ցինիզմ է, երբ ոմանք, մոռանալով, թե մի քանի օր առաջ ում մասին ինչ են ասել, ում եւ ինչի համար են մեղադրել, հանգիստ խղճով «վեցյակներ» ու «եռյակներ» են ստեղծում նույն մարդկանց հետ:

Ցինիզմ է, երբ ոմանք արհեստական դաշինքներ ու միավորումներ են ստեղծում, հետո էլ ներքին գզվռտոցները դարձնում հանրության սեփականությունը: Ցինիզմ է, երբ ոմանք, մոռանալով, թե մի քանի օր առաջ ում մասին ինչ են ասել, ում եւ ինչի համար են մեղադրել, հանգիստ խղճով «վեցյակներ» ու «եռյակներ» են ստեղծում նույն մարդկանց հետ:

Նշվածի խորապատկերի վրա արդեն սովորականի պես է դիտվում որոշ քաղաքական ու պետական այրերի շուրթերից հնչող ցինիկ կեղծիքը: Այն կեղծիքը, երբ ոմանք հակված են մեր շրջապատը դիտարկել ու ներկայացնել բացառապես սեւ, իսկ ոմանք էլ միայն վարդագույն-վարդագույն: Արժե՞ արդյոք զարմանալ, որ վերին մակարդակների, քաղաքական ընտրախավի հրապարակային ցինիզմը մեխանիկորեն ածանցվում է այլ ոլորտներում ու հանդես գալիս հեռուստաէկրանից, թերթի էջերից, թատերական բեմերից հասարակության գլխին թափվող հեղեղի տեսքով: Եվ դա օրինաչափ է, քանզի հասարակության կյանքի մի բնագավառում արժեչափի անկումն անխուսափելիորեն իջեցնելու է մյուս բնագավառների արժեքային չափանիշների մակարդակը:

Բայց ամենատխուրն այն է, որ ցինիզմը որպես ինքնադրսեւորման հիմնական միջոց օգտագործող նույն անձինք դժգոհում են ժողովրդից: Բողոքում են, որ ժողովուրդն ընտրություններում իր ձայնը վաճառում է, որ ժողովուրդը ապաքաղաքական կեցվածք ունի եւ անտարբեր է պետական ու քաղաքական կյանքի հանդեպ: Բայց չէ՞ որ հենց իրենք են ժողովրդին հասցրել այդ վիճակին, չէ՞ որ հենց իրենց ցինիզմն է ժողովրդին զզվեցրել եւ օտարել քաղաքականությունից ու պետությունից:

Սկվերոտ թափանցիկություն

էջ 1

Ի՞նչ բարոյական չափանիշների մասին է խոսքը, երբ կաշառակերությունը օրեցօր ընդլայնվում է, բուհի դիպլոմ գնած մարդիկ պատասխանատու եւ կարեւոր պաշտոններ են զբաղեցնում իրենց իրավունք վերապահելով որոշումներ կայացնել: Կիսատ-պռատ, բայց վերեւներին ծեռնտու օրենքը, որով ասվում է, թե կառավարությունն էլ է մտահոգ հասարակության եւ իշխանության միջեւ թափանցիկության ապահովման խնդրով, իրականում նման է ոչ նորմալ երեխայի ծննդի: Այս տեսակետը, որքան էլ տարօրինակ է, հիմնավորում է հենց օրենսդիրի փոխխոսնակ Տիգրան Թորոսյանը. «Եթե ես ձեզ ասեմ, որ ընդամենը գլուխ եւ վիզ ունեցող երեխան աշխարհի ամենագեղեցիկ մանուկն է, ի՞նչ կմտածեք իմ հոգեվիճակի մասին»:

Եվ քանի որ այս անդամալույծ օրենքը շատ հարմար է գործադիրին, ապա պետեկամուտների փոխնախարար Արմեն Ալավերդյանը անխնա կերպով համոզում է, թե ամեն ինչ կարգին է. «Սա հենց այն օրենքն է, ինչը անհրաժեշտ է Հայաստանին, քանի որ մենք պետք է աստիճանաբար գնանք դեպի այն գործընթացը, ըստ որի պաշտոնյաները կհայտարարագրեն նաեւ ծախսերի մասը՝ հարկ վճարելով իրենց եկամուտների համար: Սա կոչվում է փուլային տարբերակ»: Ըստ այս փուլային տարբերակի, փաստորեն, մեր երկիրը 2004-ից շուտ չի կարող պաշտոնյային հարց տալ. «Որտեղի՞ց քեզ այս փողերը»:

Արդեն իսկ կիրառվող թերի օրենքի համաձայն, պաշտոնյաների հայտարարագրած գույքի «չափերը» կհրապարակվեն մեկ ամսից ոչ շուտ, թեեւ գործընթացն արդեն ավարտվել է, եւ, ինչպես տեղեկացանք պետեկամուտների նախարարությունից, բոլոր տվյալներն ուղարկվել են հրապարակման:

Փաստորեն, մի ամսից կպարզվի, որ մեր պաշտոնյաները այնքան էլ հարուստ չեն, նրանց շքեղ, բազմահարկ առանձնատները կամ ավտոմեքենաներն էլ իրենցը չեն, այլ ինչ-որ հեռավոր ազգականինը, որն էլ, լինելով «մեծ հումանիստ», իր ունեցվածքը պարզապես օգտագործման է տվել իր բարեկամ-պաշտոնյային: Այս սողանցքը եւս ստեղծված է օրենքում պաշտոնյայի հետ փոխադարձորեն կապված անձանց շրջանակով, որը, ի տարբերություն շատ երկրների, մեր երկրի պարագայում բավականին սեղմ է: Այսպիսով, հայտարարագրումը զուտ ծեւական բնույթ է կրում, չնայած գործադիրը հույսով է, թե ժողովուրդը կհավատա իր հրապարակած տվյալներին: Ի՞նչ է փաստում ստեղծված իրողությունը, որ խորհրդարանը կատարյալ օրենք ընդունելու կարողություն չունի, իսկ կառավարությունը ոչ միայն կիրառում է օրենքը, այլեւ համոզում է, թե սա հենց այն է, ինչը անհրաժեշտ է Հայաստանին, մինչդեռ հասարակ քաղաքացին ոչ միայն չի հավատալու պաշտոնական տեղեկագրում հրապարակված տվյալներին, այլեւ շարունակելու է հասարակություն-իշխանություն պատնեշի ընդլայնումը: Որքան էլ մեր պաշտոնյաները փորձեն կաշառակերությունից հեռու երեւալ, դժվար թե հաջողվի, քանի որ 50.000 դրամ աշխատավարձ ստացող վարչության պետը, նախարարը մաքուր ձեռքերով չի կարող 100 հազար դոլար արժողությամբ ավտոմեքենա ունենալ կամ ապրել բազմահարկ դղյակում: Ստացվում է, որ «Իշխանության մարմինների, ղեկավար աշխատողների գույքի եւ եկամուտների հայտարարագրման» օրենքով պարզապես ժողովրդի նյարդերն ու համբերությունն են ուզում շոշափել միաժամանակ հույս ներշնչելով, թե սա կոչվում է փուլային տարբերակ, թե ծախսերի մասը եւս կավելացվի օրենքում, բայց 2004 թ.: Եվ այդ ժամանակահատվածում հայտարարագրման գործընթացը կներառի ողջ հասարակությունը, պաշտոնյան այլեւս իր ունեցվածքը հեռավոր ազգականի անունով չի կարողանա ծեւակերպել, քանի որ վերջինս էլ հայտարարագրելու ենթակա գույք եւ եկամուտներ կունենա... ու էլի շատ «քամիներ» հանուն «աթոռի»:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ԱՐՄԵՆ ՊԱՐԵՆՅԱՆԻ

ԲԵԼԼԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՍԱԿԵՏ

Դաս չքաղաքները

Բոլոր ուղղություններով ու բոլոր առումներով փառահեղ տապալվելուց հետո թվում էր, թե, այսպես կոչված «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողով»-ը այլեւս իր մասին չի հիշեցնի: Համենայն դեպս, սպասելի էր, որ թե այդ սադրանքի հեղինակները, թե դրան անդամակցած հայազգի անդամները, թե ինքնակոչ հաշտարարների գործունեությունը ամենայն մանրամասնություններով լուսաբանող որոշ քարոզչամիջոցները՝ գոնե Հայաստանում, պիտի հասկացած լինեին մի պարզ ճշմարտություն: Այն է, հատուկ պատվերով ստեղծված նմանօրինակ «հաշտեցնող» խմբերի գոյությունն անիմաստ է թեկուզ այն պատճառով, որ մի կողմից թուրքերը մեզ հետ հաշտվելու-չհաշտվելու խնդիր չունեն, այլ ունեն իրենց գործած ոճիրն ուրանալու նպատակ, մյուս կողմից հայերը հաշտվել-չհաշտվելու խնդիր չունեն, այլ ունեն պատմական արդարությունը վերականգնելու պահանջ ու կամք:

Բայց արի ու տես, որ ժամանակ առ ժամանակ հայաստանյան լրատվամիջոցներին դարձյալ հյուրընկալում են տխրահռչակ «հաշտարարներից» ոմանք ու փորձում երկու գաղափար առաջ տանել: Նախ որ «հաշտեցնող հանձնախումբը» ոչ թե վերացել է, այլ պատրաստվում է նոր անունով ու նոր կազմով կրկին բեմ ելնել: Երկրորդ որ հաշտարարության փորձի ձախողումը պատճառ էր Հայաստանի եւ Սփյուռքի որոշ հասարակական-քաղաքական շրջանակների (նկատի ունեն, բնականաբար, առաջին հերթին Դաշնակցությանը) մերժողական կեցվածքի ու քարոզչության: Ահա, այս օրերին հերթական անգամ երեւան է ժամանել ռուսաստանցի քաղաքագետ, հաշտեցման հանձնախմբի հայ անդամներից Անդրանիկ Միհրանյանը: Ուշագրավ է, որ հանձնախմբի վերակենդանացման հույսերը դարձյալ շրջանառության մեջ է դնում հենց նա, ոչ թե նրա գործընկեր Ալեքսանդր Արզումանյանը: Թերեւս այն պատճառով, որ քաղաքական կյանքում ակտիվանալու հայտ ներկայացրած ՀՀՇ-ին այնքան էլ ծեռնտու չէ ամեն անգամ հրապարակավ արտահայտել իր թուրքամետությունը: Սակայն էականը սա չէ, այլ անթաքույց այն համառությունը, որով ոմանք (մեր մեջ ու մեզանից դուրս) փորձում են առաջ տանել Թուրքիայի կողմից հակահայկական քարոզարշավում փայլուն կերպով օգտագործված այս «տրոյական ձին»: Աշխարհաքաղաքական շախմատում այս «ձիուն» վերապահված հայկական Սփյուռքը պառակտելու եւ Ցեղասպանության ճանաչման ուղղությամբ կատարվող լոբբիստական աշխատանքները խաթարելու դերակատարումը սույն գործիչները դեռ պիտի փորձեն պարտադրել մեր հանրությանը: Նրանց համար ազգային արժանապատվության հարցը միշտ երկրորդական է, եթե առիթ է ստեղծվում արեւմտյան որեւէ կազմակերպության տրամադրած դրամաշնորհով «քաղաքակիրթ» ու «խաղաղասեր» երեւալ: Իսկ նման դեպքում ոչ զայրանալ է պետք, ոչ էլ զարմանալ: Ընդամենը պետք է նրանց արածին արժանի պատասխան տալ:

ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Արմենտելյան լաբիրինթոս

Կապի ոլորտում ՀՀ կառավարության գործունեությունն ուսումնասիրող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովը առաջիկա եռօրյայի ընթացքում կներկայացնի եզրակացություն՝ հիմնվելով ուսումնասիրությունների արդյունքների վրա: Ի դեպ, այս հարցը նախորդ եռօրյայի ընթացքում թեև ընդգրկված էր օրակարգում, բայց չներկայացվեց փեղեկանքի պատրաստ չլինելու պատճառով:

Բելլա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հունական OTE ընկերությունը իր գործունեության ընթացքում անմիջական որեւէ ներդրում չի կատարել՝ լինի դա ապրանքների թե դրամական միջոցների տեսքով:

Ուսումնասիրությունների արդյունքում ակնհայտ է դարձել նաեւ, որ բաժնետոմսերի առք ու վաճառքի պայմանագիրը չի նպաստել ներդրումային պարտավորությունների կատարմանը, այսինքն՝ թերի է եղել: Այսպիսով, թիվ 60 լիցենզիայով տրված մենաշնորհը չի խթանել կապի ոլորտի զարգացումը:

Այն, որ 100 մլն դոլար ներդրումները չեն կատարվել, հունական OTE ֆիրման չարաշահումներ է թույլ տվել եւ այլն, ավելի խոր արմատներ ունի, գալիս է դեռեւս 1993 թվականից, երբ ՀՀ կապի նախարարության եւ TWT ընկերության միջեւ կնքվել է պայմանագիր, ըստ որի՝ TWT-ն հանդիսանում է հեռահաղորդակցության ոլորտի բացառիկ մատակարարող: Այսպիսով խախտվել են օրենքը եւ ենթաօրենսդրական գործող ակտերը, իսկ մինչ այդ կապի նախարար Գրիգոր Պողպատյանը, առանց կոլեգիային իրազեկելու, միանձնյա բանակցություններ է վարում, եւ արդյունքում 1993 թ. հուլիսի 30-ին 10 հազար դոլար կանոնադրական կապիտալով, Մեծ Բրիտանիայի Չերնսի կղզում գրանցում է TWT ընկերությունը: Այս գործելաոճով բավական հմտորեն կոծկվել են բազմաթիվ մութ գործարքներ, որոնց արդյունքում ընկերությունը իր ներդրումային պարտավորությունները չի կատարել 46,55 տոկոսով: Ավելին՝ որպես ներդրում է հաշվարկել գերմանական «Սիմենս» ֆիրմայի կողմից ապրանքային վարկի շրջանակներում կիրառված 9,6 մլն դոլարի չափով վեղչը եւ, մինչեւ բաժնետոմսերի 90%-ի վաճառքը, հունական OTE ֆիրմային TWT-ն, 49% ներդրում ապահովելու համար, պարտք է մնացել 15522,8 հազ. դոլար: Այսպիսով, ի տարբերություն հայկական կողմի՝ վաճառքից ստացած շահույթի, TWT-ի շահույթը 9,6 անգամ ավել է եղել: Ստացվում է, որ Գրիգոր Պողպատյանը այս ամենը ծառայեցրել է բացառապես ի շահ իրեն՝ վնասելով ողջ համակարգը: «Շահավետ գործարքների» արդյունքում «ԱրմենՏելից», իրավաբանական խորհրդատվության անվան տակ, գանձվել է 2204,5 հազ. դոլար, մինչդեռ այդ ծառայությունը եւ մի շարք ծառայություններ եւս, ըստ հիմնադիր պայմանագրի, պետք է իրականացվեին անվճար:

TWT-ն հետագայում «ԱրմենՏելի» վաճառքից ստացված 9387,0 հազ. դոլար շահութահարկը եւս չվճարեց, որը ՀՀ կառավարությունը գանձեց OTE ֆիրմայից: Այս ամենին հաջորդում է 1996 թ. ԱԺ կողմից ընդունված «Պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ ապապետականացման 1996-97 թթ. ծրագրի մասին» օրենքը, որում ընդգրկվում է «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ-ն: Այս ամենից ընդամենը 8 օր հետո Գրիգոր Պողպատյանը կառավարությանն է ներկայացնում «ԱրմենՏելը» միջազգային մրցույթով վաճառելու ծրագիր, որը հաստատվում է: 1997 թ. դեկտեմբերի 9-ին TWT-ն հունական OTE ֆիրմայի հետ կնքում է «ԱրմենՏելի» բաժնետոմսերի վաճառքի պայմանագիր: 1998 թ. մարտի 9-ին «Պետական ձեռնարկությունների եւ անավարտ օբյեկտների սեփականաշնորհման հատուկ հաշվին մուտքագրվել է ընդամենը 73302,5 հազար դոլար: Փաստերը խոսում են այն մասին, որ առք ու վաճառքի պայմանագիրը եւ վերախմբագրված թիվ 60 լիցենզիան կազմվել է հիմնականում «ԱրմենՏել» գնորդի համար հնարավորինս գրավիչ դարձնելու սկզբունքով, որը, իհարկե, միանշանակ կերպով անտեսել է մեր երկրի շահերը: Այս ամենից հետո թեեւ հաստատվել է 1999-2003 թթ. բիզնես-պլանը, սակայն այն հետագայում չի կատարվել ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով: Հունական OTE ընկերությունը իր գործունեության ընթացքում անմիջական որեւէ ներդրում չի կատարել՝ լինի դա ապրանքների թե դրամական միջոցների տեսքով: Ընդհանուր հաշվով 100 մլն դոլարի չափով ներդրումներ չեն իրականացվել:

Ուսումնասիրությունների արդյունքում ակնհայտ է դարձել նաեւ, որ բաժնետոմսերի առք ու վաճառքի պայմանագիրը չի նպաստել ներդրումային պարտավորությունների կատարմանը, այսինքն թերի է եղել: Այսպիսով, թիվ 60 լիցենզիայով տրված մենաշնորհը չի խթանել կապի ոլորտի զարգացումը եւ մենաշնորհը վերանայելու խնդիր է առաջացել: Ելնելով այս ամենից՝ առաջարկվում է չեղյալ համարել թիվ 60 լիցենզիայով «ԱրմենՏելին» տրված մենաշնորհը, ամենօրյա հսկողություն սահմանել ֆինանսական եւ առեւտրային գործարքների վրա: Բացի վերոհիշյալից, առաջարկվում է նաեւ ՀՀ կառավարությանը հանձնարարել՝ մշակել ռազմավարական ծրագիր հեռահաղորդակցության ոլորտի հեռանկարային զարգացման ուղղությունների վերաբերյալ՝ ընդգրկելով Մեղրի-Մսրանդ մանրաթելային կապուղու շինարարության խնդիրը: Այս ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է գտնել նաեւ համապատասխան ներդրողներ:

ԱՍՈՒԼԻՍ

Անմեղության ասուլիս

37-րդ դեցիմետրային հաճախականությունը «Շարմ» ընկերությանը տրամադրելու հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի որոշման համար հիմք է հանդիսացել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքը: Այսինքն հաստատված օրենքի թերի կողմերը անդրադարձել են մրցույթի վրա եւ արդյունքում դաշտից դուրս է մղվել արդեն գործող Ա1+ հեռուստաընկերությունը: Հանձնաժողովը, բնականաբար, իր կայացրած որոշումը հիմնավորում է օրենքով, եւ այս օրերին հնչող կարծիքներից շատերը վկայում են, որ հնարավոր խախտման մեղքը հենց օրենքինն է: Սակայն օրենքի «բարելավմանը» նպաստած ԱԺ գլխադասային կրթության, գիտության, երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի ղեկավար Շավարշ Քոչարյանը միայն հիմա է, երբ օրեցօր գերակշռում են վերոհիշյալ կարծիքները, անհրաժեշտ համարում արդարանալ՝ մեջբերելով օրենքի այն դրույթները, որը խախտել է հանձնաժողովը: Շավարշ Քոչարյանը, ներկայացնելով օրենքի անցած ուղին, չմոռացավ ասել նաեւ, որ Վենետիկի հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել, այս պահին ընտրել է «Ես մեղավոր չեմ» քաղաքականությունը: Այսինքն ցավը ոչ թե կատարվածն է, ըստ որի հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը 37-րդ կապուղուց զրկեց Ա1+-ին, այլ այն, որ մեղքն իր եւ համահեղինակների վրա են «գցում»:

Վերջին 10 օրերի ընթացքում արված հայտարարություններն ու դիրքորոշումները առանց այն էլ զերծ չեն սուբյեկտիվությունից, եւ մնում էր «Ինձ մի մեղադրեք»-ը, որն էլ հնչեցրեց Շավարշ Քոչարյանը: Ամենաանընդունելին այն է, որ հարցի ոչ էությունը եւ ոչ էլ արդեն իսկ կատարվածն է մտահոգում ընդդիմադիր քաղաքական ուժերին, այլ ամեն ինչի մեջ սեփական շահերը ներկայացնելու ցանկությունը: Ու չնայած այս ամենին, Շավարշ Քոչարյանը փորձում է համոզել, որ իր նպատակը ամենեւին էլ օրենքը իդեալական համարելը չէ, այլ այն, որ հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի հաստատած մրցույթի անցկացման թերի կարգը, որով խախտվել է «անթերի» օրենքը:

Ըստ օրենքի, պետք է հրապարակվի հաճախականությունների ցանկը եւ անցկացվի մեկ մրցույթ, մինչդեռ հանձնաժողովը տրոհել է մրցույթը յուրաքանչյուր հաճախության համար սահմանելով առանձին մրցույթ: Օրենքում նախատեսված է նաեւ, որ մասնակցող ընկերությունը պետք է տեղեկատվություն ներկայացնի իր աշխատակազմի կրթական մակարդակի, թվի եւ մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ, ինչը եւս, ըստ Շավարշ Քոչարյանի, խախտվել է: Հանձնաժողովը պահանջել է ընդհանուր տեղեկություն աշխատակազմի վերաբերյալ, եւ մրցույթի կարգում ծրագրերի թեմատիկայի, մասնագիտացման ուղղության, առավելագույն ծավալի փոխարեն նշված է միայն «ծրագրային քաղաքականություն» արտահայտությունը: Այս ամենը ասելուց եւ իր «առաքելությունը» կատարելուց հետո միայն քաղաքական գործիչը սահուն անցում կատարեց դեպի եւս մի դիվիդենտ շահելու քայլը նշելով, որ իշխանության տերը պետք է լինի ժողովուրդը. կարգախոս, որը ինչքան էլ արժեքավոր է եւ իսկապես անհրաժեշտ, ցավոք, վաղուց արժեզրկվել է հանրահավաքների թատերաբեմում:

Ք. Յ.

ՀԱԿԱՍՈՒՄ

Քաղաքական մտրակը կարող է հակադարձել

«Ա1+» հեռուստաընկերության շուրջ ստեղծված վիճակի վերաբերյալ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ապրիլի 3-ի տարածած հայտարարությունը հավակնում է դառնալ ներդաշինքային պատակցումների պատճառ:

Իհարկե, նախկինում առիթներ ունեցել ենք համոզվելու, որ «Իրավունք եւ միաբանություն» նախընտրական դաշինքը զուրկ է գաղափարական հենքից: Բայց ԱՄՆ դեսպանատան հայտարարության նկատմամբ հիշյալ դաշինքի անդամների դրսեւորած վարքագիծը եւս մեկ, լրացուցիչ անգամ եկավ ապացուցելու այդ իրողությունը: Հիշեցնենք, որ անդրադառնալով «Ա1+»-ին լիցենզիայից զրկելու ազգային հանձնաժողովի որոշմանը ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունը նախազգուշացրել էր Հայաստանի իշխանություններին. «...Եթե մամուլն անհասանելի դառնա քաղաքական կարծիքի լայն շրջանակների համար, ապա դա միայն կթուլացնի Հայաստանի ջանքերը տեղ գտնել բոլոր համապատասխան միջազգային կառույցներում ինտեգրված ժողովրդավարական ազգությունների շարքում»: Սա արդարացիորեն առաջացրել է շատ-շատերի, այդ թվում նաեւ «Իրավունք եւ միաբանություն» խմբակցության անդամ Աղասի Արշակյանի վրդովմունքը:

«Ես այս իշխանություններից դժգոհ եմ, բայց երբ նրանց այդ ձեւով օտարերկրացիներն են դիմում իմ մեջ ըմբոստանալու ցանկություն է առաջանում»,- մեզ հետ զրույցում ասաց Ա. Արշակյանը՝ նկատելով. «Ախր, ամերիկացի ընկերներ, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանի շայկան ձեր աչքի առաջ մի բան էր անում բոլորովին այլ դիրքորոշում էիք որդեգրում: Կամ ի՞նչ արեցիք Հարավսլավիայում ու հիմա ի՞նչ եք անում արաբական աշխարհի հետ»:

Պրն Արշակյանի գնահատմամբ, ԱՄՆ դեսպանատան վերոնշյալ հայտարարությունը «քիթն ամեն տեղ խոթելու» նման մի բան է եւ վկայությունը, որ առաջնորդվում են երկակի ստանդարտներով: «Աշխարհի ժանդարմի այդ հովանոցը, որ վերցրել են կամ հավակնում են այդ դերին, շատ վատ հետեւանքներ կարող է ունենալ նախեւառաջ ամերիկացի ժողովրդի համար: Արտաքին քաղաքական մտրակները աջ ու ձախ շաղ տալը պետք է վերանայեն, այլապես շատ շուտով ամբողջ աշխարհին կհանեն իրենց դեմ»,- շեշտեց Աղասի Արշակյանը: Մինչդեռ նույն այդ խմբակցության դեկավարը «Ազգային միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը, բոլորովին այլ կարծիքի է, ավելին անգամ ոգեւորվել է ամերիկացիների այդօրինակ հայտարարությունից, ինչի մասին խոստովանել է ընդհուպ ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջորջ Օրդուեյի հետ հանդիպման ժամանակ:

Մասնավորեցնենք, ապրիլի 9-ին, ինչպես տեղեկացրել էր թերթերից մեկը, ԱԺ պատգամավորներ՝ Վահան Հովհաննիսյանը, Վազգեն Սանուկյանը եւ Արտաշես Գեղամյանը իսկապես հանդիպել են Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջորջ Օրդուեյի եւ Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռոս Ուիլսոնի հետ թերեւս այն տարբերությամբ, որ պաշտոնական հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի խոսվել է ոչ թե «Ա1+»-ի, այլ բացառապես աշխարհաքաղաքական, տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող խնդիրների շուրջ: Իսկ «Ա1+»-ի մասին, մինչ բուն քննարկումը, խոսակցություն է բացել Արտաշես Գեղամյանը՝ իր խորին շնորհակալությունները հայտնելով ԱՄՆ դեսպան Օրդուեյին դրսեւորված դիրքորոշման կապակցությամբ, եւ խոստովանել, որ այն շատ օգտակար է եղել, քաջալերել ու ոգեւորել է իրենց:

Եվ դեռ այսքանից հետո իշխանություններին մեղադրում է, օտարներին ծախվելու, հաճոյանալու մեջ...

U. S.

Մեծ մարզի Մեծ հոգսերը

ՀՀ Ազգային ժողովի ՀՅԴ պատգամավորական խմբակցության անդամներ Աղվան Վարդանյանը, Արմեն Ռուստամյանը, Մարտուն Մաթևոսյանը, Կիմ Բալայանը, Ռուբեն Հովսեփյանը, Մուշեղ Միքայելյանը եւ Դավիթ Երիցյանը հանդիպումներ ունեցան Գեղարքունիքի Գավառ, Սեւան, Վարդենիս, Ճամբարակ քաղաքների եւ մարզի շուրջ 20 գյուղի բնակչության հետ:

ԷԴԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Մարդիկ, որ «իշխանավորների» հետ հանդիպելու առիթներ այնքան էլ հաճախ չէին ունեցել, խոսելու հերթը դժվարությամբ էին զիջում միմյանց, աշխատում էին ոչինչ բաց չթողնել այն հույսով, որ, ինչպես իրենք էին ասում, դաշնակցական պատգամավորներն իրենց հաստատ չեն մոռանա ու Ազգային ժողովի ամբիոնից կխոսեն ցավոտ հարցերից:

Նման հանդիպումները, ինչպես արդեն քանիցս նշվել է, էապես նպաստում են ժողովրդի եւ իշխանությունների միջեւ չմիջնորդավորված կապի հաստատմանը, օգնում հեռավոր մարզերի բնակչության խնդիրները, առանց զանազան ատյանների քաշքշուկի, ԱԺ ամբիոնից հնչեցնելու միջոցով գործադիր իշխանությանը փոխանցելուն:

Ինչպես նշեցին պատգամավորները, այս հանդիպումների արդյունավետությունը հատկապես անառարկելի է մեզանում դեռեւս չկայացած տեղական ինքնակառավարման համակարգի պայմաններում: Պատահական չէ նաեւ, որ գյուղական բնակչության դժգոհությունների մեծ մասը վերաբերում էր հենց տեղական ինքնակառավարման խնդիրներին:

«Մեզ ազատեք Գավառի տիրապետությունից»

Հանրապետության մարզերից երեւի թե ոչ մեկում տարածքային վերաբաժանման խնդիրն այնքան սրությամբ չի դրված, որքան Գեղարքունիքի մարզում: Սեւանա լճի եւ լեռնաշղթաների դասավորվածությունը, ռելիեֆի այլ բարդություններ ժամանակի ընթացքում իրենց կնիքն են դրել այս տարածքի բնակչության շրջանում տարբեր բարբառներով խոսող խմբերի, առանձին բնակավայրերում յուրաքվի կենսակերպի ձեւավորման վրա: Ճանապարհների անմխիթար վիճակն այսօր էլ լուրջ խնդիրներ է ստեղծում մարզկենտրոնի եւ ասենք՝ Ճամբարակի (նախկին Կրասնոսելսկի) տարածքի գյուղերի հաղորդակցության համար: Այստեղ մարդիկ դժգոհում են նաեւ, որ մարզային իշխանությունները շատ հարցերում նկատելի խտրականություն են հանդես բերում: Գետիկ գյուղում, օրինակ, մատնացույց արեցին միջնակարգ դպրոցի շենքը, որի տանիքի 70 տոկոսը փլվել է 2001 թ. նոյեմբերին վրա հասած փոթորիկից: Քամին վնաս է հասցրել նաեւ Գավառի մի շարք շինությունների: «Ինչն է պատճառը,- հարցնում են նրանք,- որ վերջիններս վաղուց տանիքապատվել են, իսկ մեր դպրոցը մնացել է այսպես: Չէ՞ որ բյուջեով անհրաժեշտ գումար է հատկացվել (4 մլն 620 հազար դրամ), ինչո՞ւ այն տեղ չի հասնում»: Տեղ չեն հասնում նաեւ գյուղատնտեսության փոխօգնության բանկի վարկերը, որոնք օդ ու ջրի պես անհրաժեշտ են գարնանային աշխատանքներին: Գործընթացը դեռեւս Սեւանի գյուղերում է: Ե՞րբ այն կհասնի Ճամբարակ՝ ոչ ոք չգիտի: 80-ամյա գետիկցու զայրույթն էլ հասկանալի էր. «Մենք Գավառի ու Սեւանի ճորտե՞րն ենք, ինչ է»:



Երբ աղքատանում ես, կպիր հողին

Գյուղական բնակչությունը քաջատեղյակ է, որ իշխանությունները աղքատության վերացման ծրագրեր են մշակում, բայց նրանք նաեւ վստահ են, որ ցանկացած նման ծրագիր անհնար է իրագործել, քանի դեռ տեղի չի ունեցել համայնքապատկան հողերի վերագնահատում, հարկային բեռի թեթեւացում, քանի դեռ հողը մեկի ձեռքին է, իսկ այն մշակող տեխնիկան՝ մյուսի: Երբ աղքատանում ես, կպիր հողին: Սա գյուղացու համար հայտնի ճշմարտություն է, բայց այսօրվա գյուղացին հրաժարվում է դրանից, հարկերի պատճառով հրաժարվում է իր հողակտորից, անասունից, ավտոմեքենայից, որպեսզի աղքատության նպաստ ստանա:

Ի դեպ, ավտոմեքենաների մասին: Մարդիկ զրկված են անգամ անձնական օգտագործման մեքենայով գյուղմթերքները քաղաք հասցնելու հնարավորությունից: Բանն այն է, որ դրանք տարիներ շարունակ, միջոցներ չլինելու պատճառով, տեխզննում չեն անցել: «Մենք Արարատյան դաշտի գյուղերի բնակիչների նման տարին երկու բերք չենք ստանում: Այնքան եկամուտ չկա, որ կարողանանք տեխզննման եւ համարանիշների փոխանակման ծախսերը հոգալ,- ասում էին նրանք վրդովված,- մի՞թե հնարավոր չէ այս վիճակում հայտնված գյուղացուն ձեռք մեկնել»:

«Գազելը» հասավ Դպրաբակ

Ճամբարակի Դպրաբակ եւ Գետիկ գյուղերում խոսակցությունն անընդհատ պտտվում էր այդ բնակավայրերը արտաքին աշխարհի հետ կապող միակ «Իկարուս» ավտոբուսի շուրջ: Այստեղ նրան մրցակից է հայտնվել՝ «Գազելը»: Գծի համար պայքարը հասել է այնտեղ, որ ավտոբուսի վարորդին քաղաքում սպառնացել են, թե կծեծեն: Սա էլ խոովել է գյուղացիներից, որ վերջիններս չեն բողոքում «Գազելի» դեմ:

Իրականում գյուղացիները բողոքում են: Ավտոբուսի հնարավորություններն ավելի մեծ են, կարելի է քաղաք գնալիս նաեւ բեռներ տեղափոխել: Նաեւ էժան է: Բայց արի ու տես, որ այստեղ էլ գծակռիվ է սկսվել: Մարդկանց ստիպում են իրար գլխի լցված մեկնել քաղաք ու վերադառնալ «Գազելով»: Մեծածավալ ճամպրուկների եւ իրերի մասին խոսելն ավելորդ է:

- Էս գիծն էլ ծախեցին, մեր ճանապարհներն էլ: Մեզ էլ ծախեն, պրծնեն, էլի,- ասաց մի դպրաբակցի՝ հայտարարելով, որ «Գազելը» հասել է Մարտունի գյուղ ու վաղը, մյուս օրը կիջնի Դպրաբակ»:

«Գազելը» տեղ հասավ, հեռուստատեսությունը՝ ոչ

Մարզի մի շարք գյուղերում, հատկապես սահմանամերձ, հայկական հեռուստատեսության հաղորդումները չեն հասնում: Ամսվա մեջ 2-3 երջանիկ օրեր լինում են, երբ մարդիկ խավար պատկերներ այնուամենայնիվ ստանում են, բայց դա խնդրի լուծում չէ: Հեռահաղորդակցության այս միջոցի բացակայությունը մարդկանց մեջ էլ ավելի է խորացնում սեփական երկրում լքվածության զգացումը, խարխլում ապագայի հանդեպ հավատի հիմքերը: Նրանք պատգամավորներից տեղեկացան, որ նման ցավոտ խնդիր կա նաեւ Սյունիքի մարզում, եւ այդ մասին արդեն հարց է բարձրացվել կառավարության առջեւ:

Այդուհանդերձ արձանագրենք, որ խնդիրը շուտափույթ լուծելու անհրաժեշտություն կա, քանի որ տեղեկատվության պակասը մարզի հեռավոր գյուղերում առավել նկատելի է թերթերի ու ռադիոյի բացակայության պատճառով:

Վերջաբանի փոխարեն

Մարդկանց բողոքներն ու խնդիրները, հասկանալի է, չսահմանափակվեցին միայն վերը թվարկվածներով: Մեր պատգամավորները ստիպված էին արձանագրել նաեւ բնակարանաշինության, փախստականների կարգավիճակի, տեղական ինքնակառավարման, ուսանող եւ սովորող երիտասարդության, քաղաքային բնակչության խնդիրներին եւ հատկապես գործազրկությանն առնչվող մի շարք հարցեր, որոնց լուծումը զանազան պատճառաբանություններով տարիներ շարունակ աչքաթող է արվել: Առավել սրությամբ է դրված, օրինակ, Ճամբարակ քաղաքի խմելու ջրի հարցը: Գարնան ամիսներին չվերահսկվող ջրամբարներում կասկածելի մաքրության ջուր է կուտակվում, որն անարգել հասնում է բնակչությանը:- Հետեւանքները կարող են ողբերգական լինել,- վստահեցնում են ճամբարակցիները:

Վարդենիս քաղաքի բնակչությանն առավելապես գործազրկության խնդիրներն են հուզում: Երիտասարդների մեծ մասը աշխատանք գտնելու հույսով հեռացել է քաղաքից: Քաղաքային իշխանությունները մարզային ենթակայության կառույցների գործողություններից դժգոհ են: Դրանք հաճախ խանգարում են համայնքային բյուջեի մուտքային գումարների հավաքագրմանը:

Մարդիկ, որ «իշխանավորների» հետ հանդիպելու առիթներ այնքան էլ հաճախ չէին ունեցել, խոսելու հերթը դժվարությամբ էին զիջում միմյանց, աշխատում էին ոչինչ բաց չթողնել այն հույսով, որ, ինչպես իրենք էին ասում, դաշնակցական պատգամավորներն իրենց հաստատ չեն մոռանա ու Ազգային ժողովի ամբիոնից կխոսեն ցավոտ հարցերից:

Անբարենպաստ վարկային դաշտ

Հայաստանի բոլոր կասը կառավարությունների համար մշտապես առաջնահերթ խնդիր է եղել փոքր ու միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) հետագա զարգացման մասին խոսելն ու խոստումներ տալը: Դա, բնականաբար, արվել եւ արվում է միջազգային առաջավոր փորձի մատնանշումով, ըստ որի՝ զարգացած կարող է կոչվել այն երկիրը, որտեղ ՀՆԱ-ի 55-80 տոկոսը եւ աշխատատեղերի կեսից ավելին ստեղծվում են հենց ՓՄՁ-ի հաշվածում:

Տիգրան ՍԻՄՈՆՅԱՆ

Ցավոք, մեր երկրի ՀՆԱ-ում փոքր եւ միջին ձեռնարկության ինստիտուտի դերը տակավին չի գնահատված հավուր պատշաճի: Անգամ 2001 թվականի տարեկան հաշվետվություններում իրավասու նախարարությունները շրջանցել են խնդիրը:

Հարցը այդքանից հետո ինքնին է առաջ գալիս՝ իսկ որքա՞ն են սույն չափորոշիչները ընդունելի Հայաստանի տնտեսական համակարգի պարագայում: Ցավոք, մեր երկրի ՀՆԱ-ում այս ինստիտուտի դերը տակավին չի գնահատված հավուր պատշաճի: Անգամ 2001 թվականի տարեկան հաշվետվություններում իրավասու նախարարությունները շրջանցել են խնդիրը: Ավելին, օրերս այս կապակցությամբ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանն ուղղված մեր հարցը մնաց անպատասխան: Մեր երկրորդ՝ վերջին հինգ տարում որքա՞ն վարկային միջոցներ են նպատակաուղղված եղել ՓՄՁ զարգացմանը, հարցի պատասխանը ստացվեց միայն տասնօրյա «բանակցություններից» հետո՝ արձանագրելով, որ նպատակային վարկերի հանրագումարը, հինգ տարվա հաշվարկով, կազմում է 41,6 մլն դոլար: Եվ ոչ մի ակնարկ ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ-ի ունեցած մասնակցության չափի մասին, թեպետ, ինչպես դժվար չէ կռահել, առաջին հերթին հենց ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանն է վերապահված ՓՄՁ-ի եւ ՀՆԱ-ի հարաբերակցությունը մեկնաբանելու իրավասությունը:

Հայաստանյան փոքր ու միջին ձեռնարկատիրության ուղղությամբ իրականացվող վարկային ծրագրերի արդյունավետության եւ ՀՆԱ-ում դրա ունեցած մասնակցության չափի վերաբերյալ բավական ուշագրավ դիտարկումների հնարավոր եղավ ծանոթանալ ՀԲ հայաստանյան գրասենյակի տրամադրած «Աճի խոչընդոտները եւ կառավարության քաղաքականությունը» աշխատությունից եւ ՀՀ առեւտրի ու տնտեսական զարգացման նախարարության համապատասխան վարչությունից: Այսպես: ՀԲ գրասենյակի դիտարկումներով, Հայաստանում ՀՆԱ-ի մոտ 60 %-ը ստեղծվում է մասնավոր սեկտորի կողմից եւ դրանում ՓՄՁ-ն ունի մոտ 25 տոկոս մասնաբաժին: Մասնակցության անբավարար մակարդակը, ըստ ՀԲ դիտարկման, պայմանավորված է երեք հիմնական խոչընդոտներով՝ հարկային համակարգի անկատարության, քաղաքական անկայունության եւ ֆինանսների (իմա՝ ներդրումների եւ վարկային ծրագրերի) սղության: Գումարած դրան, հայաստանյան ողջ գործարարության, հետեւապես նաեւ ՓՄՁ-ի համար լուրջ ֆինանսական արգելք է վարկային բարձր տոկոսադրույքը, ինչը փոքր եւ միջին ձեռնարկատիրոջը ստիպում է դիմել ֆինանսավորման ոչ ֆորմալ աղբյուրների օգնությանը...

Հիշեցման կարգով նշենք, որ ոլորտի զարգացման առկա վիճակի վերաբերյալ խիստ լավատեսական տեսակետ էր հայտնել նաեւ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունը՝ հավաստիացնելով, որ գործարար միջավայրի բարենորոգման շնորհիվ 2001 թվականին ՓՄՁ-ների թիվը ավելացել է 2500-ով: Չվիճարկելով սույն հավաստիացումը՝ այդուհանդերձ, հարկ է նկատել, որ նախարարության ՓՄՁ վարչությունից ստացված պարզաբանումները դրանից էապես տարբերվում էին իրենց իրատեսությամբ: Այսպես, վարչության պետ Ռշտուն Մարտիրոսյանը միանշանակորեն անբարենպաստ գնահատեց ՓՄՁ վարկավորման գործընթացը՝ «այն բավարար հիմքեր չի ստեղծում դրական միտումների ամրակայման համար»: Եվ, որ պակաս ուշագրավ չէ, ըստ պրն Մարտիրոսյանի, վարկավորման դաշտը խիստ անբարենպաստ է հատկապես փոքր բիզնեսի եւ սկսնակ ձեռնարկատիրոջ տեսանկյունից: Առաջինի պարագայում խոչընդոտ են հանդիսացել վարկերի կարճ ժամկետը, խոշոր գրավի պահանջը եւ բարձր տոկոսադրույքները, իսկ սկսնակը չի կարողանում օգտվել վարկային միջոցներից հատուկ նպատակային ծրագրերի իսպառ բացակայության պատճառով:

Եվ՝ ոչ միայն: Պարզվում է՝ վարկավորման միջին բավարարվածությանն դեպքում անգամ ներկա դրությամբ վարկային ծրագրերը հիմնականում ուղղված են մնում ավանդական ոլորտներին՝ «չկան տարբերակված, վենչուրային ոլորտին, բարձր տեխնոլոգիաներին, զուտ արտադրությանը կամ արտահանմանը միտված նպատակային վարկային գծեր, որոնք ենթադրում են ավելի մատչելի եւ երկարաժամկետ վարկավորման պայմաններ»:

Ո՞րն է ստեղծված իրավիճակի պատճառը: Մեր այս հարցին ի պատասխան, Ռ. Մարտիրոսյանը նկատեց, որ փոքր ու միջին ձեռնարկության վերաբերյալ առաջին վիճակագրական տվյալները մշակվել են ընդամենը 2 ամիս առաջ, քանզի մինչ այդ օրենքով սահմանափակված չեն եղել ՓՄՁ չափորոշիչները: Ինչ վերաբերում է տնտեսության զարգացման գործում վերջինիս ունեցած դերին, ապա, ըստ նախնական տվյալների, այդ թիվը տատանվում է 29-35 տոկոսի սահմանում: Զրուցակցիս համոզմամբ, այս թիվը ՀՆԱ-ում կարող է նվազել մինչեւ 12-20 տոկոսի, եթե հստակորեն չափորոշվի խոշոր բիզնեսում առկա ստվերայնության ծավալը:

Ինչեւէ: Ասվածից բխում են կարեւոր հետեւություններ: Մասնավորապես, դատելով այն իրողությունից, որ ՓՄՁ վարկավորման գործընթացը եւ ՀՆԱ-ի վրա դրա բարենպաստ ազդեցությունը առայժմ բավական հեռու են վերընթաց աճի հանգրվանից, պետք է ակնկալել, որ այստեղ դրական միտումներ կարող են ամրակայվել միմիայն տեւական տնտեսական աճի եւ ռիսկայնության նվազման դեպքում:

Լուսանկարը՝ ԱՐՄԵՆ ՊՐԵՍ

ՆԻՍՏ

Մաքսանենգ ներթափանցումը բացառվում է

ՀՀ կառավարության երեկվա նիստում հավանության է արժանացել մի որոշման նախագիծ, որով փորձ է արվում խստացնել երկաթուղային ուղեւորա-ապրանքային փոխադրումների նկատմամբ մաքսային վերահսկողությունը: Մեկնաբանելով որոշման շարժառիթները երեկվա ճեպազրույցում ՀՀ մաքսային պետական կոմիտեի նախագահ Արմեն Ավետիսյանը տեղեկացրեց, որ վերջին ժամանակներս հայկական երկաթուղու տարբեր կայարաններում անօրինականության 2-3 աննախադեպ միջադեպեր են գրանցվել, «բանը անգամ հասել է նրան, որ տնտեսվարող սուբյեկտների կողմից փակվել են գնացքի դռները խոչընդոտելով մաքսավորների աշխատանքին եւ համապատասխան մաքսային գործողություններին»:

Հարկ է նշել, որ այս որոշումով գործադիրը միաժամանակ սահմանել է ապրանքների տեղափոխման նոր կարգ, համաձայն որի՝ վագոնի ուղեւորախխցիկում ուղեւորը իրավունք կունենա տեղափոխել միայն 50 կգ կամ 500 դոլարին համարժեք ապրանք, ինչի մասին հատուկ նշում կա մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածում: Ինչ վերաբերում է նախատեսվածից ավել ուղեբեռին, ապա դրանք այսուհետ պիտի հանձնվեն ուղեբեռային հատուկ վագոն: Ըստ այդմ, ապրանքի տերը պարտավոր է պահանջել համապատասխան կտրոն եւ հայտարարագրել ուղեբեռի մաքսազերծման վայրը: Հատկանշական եւս մեկ հանգամանք. պարզվում է որոշման շարժառիթներից մեկն էլ եղել է այն, որ չմաքսավորված բեռների ծավալը սկսել է էական ազդեցություն ունենալ ներքին շուկայի եւ այնտեղ գների ձեւավորման գործընթացի վրա: Այլ կերպ ասած մաքսանենգ ճանապարհով ներկրված ապրանքը անհավասար պայմաններ է ստեղծել անհատ ձեռներեցի եւ ֆորմալ գործունեություն ծավալողի համար ի վնաս վերջինի:

«Հնարավոր է, որ այս որոշման կիրառումից անմիջապես հետո բողոքներ լինեն թե Բագրատաշենում, թե այստեղ: Բայց չեմ կասկածում, որ այնքան կամք կունենանք, որ Հայաստանի Հանրապետությունում սկսի գործել ապրանքների օրինավոր մաքսազերծման եւ ներկրման գործուն մեխանիզմ»,- հավաստիացրեց Ա. Ավետիսյանը՝ հատուկ ընդգծելով, որ նոր կարգի ներդրումն իսպառ բացառում է մաքսանենգ ապրանքի թափանցումը Հայաստան:

Նպաստ՝ աշխատանքի դիմաց - 2002

Հայ գործադիրը երեկ հաստատել է աշխատանքի դիմաց տրվելիք նպաստների նշանակման եւ վճարման կարգը: Ինչպես հայտնի է, «Նպաստ՝ աշխատանքի դիմաց» ծրագիրը Հայաստանում ներդրվել է 2001 թ. տարեվերջին, եւ այս որոշումով մեկնարկ է տրվելու ծրագրի երկրորդ՝ 2002 թ. փուլին:

«Կարծում եմ՝ Հայաստանի համայնքներում սպասում էին այս որոշմանը... Պետք է ասեմ, որ նաեւ Ազգային ժողովն է դրական գնահատել ծրագիրը: Նույնիսկ նրա պնդմամբ են ֆինանսական միջոցները նույնը մնացել: 2002 թվականի համար նախատեսված է 500 մլն դրամ, որը մարզերի վրա է բաշխվել ըստ գործազրկության չափերի»,- նշեց սոցապնախարար Ռազմիկ Մարտիրոսյանը: Ըստ բանախոսի, համայնքներում եւ զբաղվածության կենտրոններում տարված նախապատրաստական աշխատանքների շնորհիվ, այսօր արդեն ծրագիրը պատրաստ է իրականացման:

Կանխելով լրագրողներին հետաքրքրող հարցը՝ Ռ. Մարտիրոսյանը նկատեց, որ թեպետ նախորդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կատարված աշխատանքների դիմաց նպաստները վճարվել են 2-3 ամիս ուշացումով (ինչը պայմանավորված է եղել բյուջետային տարվա ավարտով), այդուհանդերձ, հույս կա, որ դա չի կրկնվի 2002-ին:

Սեփ. լր.

Հարկային բարեփոխումները՝ օրակարգում

Շահեն ՄԻՆԱՍՅԱՆ

Հարկային ոլորտի հետագա բարեփոխումների արդյունքում պետք է շոշափելի կերպով բարձրանա հարկային համակարգի կայունության եւ կանխատեսելիության աստիճանը, միեւնույն ժամանակ պետք է քայլեր ձեռնարկվեն հարկային վարչարարության խստացման՝ բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար հարկման հավասար պայմաններ ստեղծելու առումով: Հարկային քաղաքականության բարեփոխման հիմքում պետք է դրված լինի, նախեւառաջ, հարկային օրենսդրության կատարելագործումը, որի առանցքը ՀՀ հարկային օրենսգրքի մշակումն ու ընդունումն է:

Իրավիճակը

Չնայած վերջին տարիներին հարկային քաղաքականության մեջ կատարված բարեփոխումներին, տնտեսության ստվերայնության մակարդակը շարունակում է մնալ բարձր: Տարեցտարի արձանագրված 6-9 տոկոսի տնտեսական աճը, ըստ էության, չի հանգեցրել պետական բյուջեի հարկային մուտքերի շոշափելի ավելացման: Որոշ գնահատումներով, այժմ էլ եկամուտների ստվերային շրջանառությունը կազմում է



ՀՆԱ-ի 40-60 տոկոսը:

Դրան շատ դեպքերում նպաստել են հարկային կոշտ քաղաքականությունը, հարկային օրենսդրության բարդությունն ու խճճվածությունը, նրա հաճախակի փոփոխությունները, հարկահավաքման բնագավառում արմատացած կոռուպցիան: Շարունակում են հարկային հատվածի կարեւորագույն խնդիրներից մնալ չվճարումներն ու ապառքները (պարտքերը): Դրանց հետ կապված խնդրի լուծման ձգձգումը հղի է երկրի ֆինանսական համակարգը կազմալուծելու եւ, ի վերջո, բյուջետային ճգնաժամ հարուցելու վտանգով:

Խնդրի լուծման հնարավոր տարբերակը

Ապառքների խնդրի լուծման առավել իրատեսական ճանապարհը պետք է համարել պետական բյուջեի նկատմամբ տնտեսվարող սուբյեկտների ունեցած պարտքերի լրիվ եւ անվերապահ վերակառուցումը: Այդ կերպ միայն կարելի է խուսափել ձեռնարկությունների գործունեության վրա այդ ապառքների կազմալուծիչ ներգործությունից: Ապառքների վերակառուցման խնդրի լուծումը ենթադրում է՝ ա) հարկային ապառքների վրա հաշվարկված տույժերի ու տուգանքների լրիվ դուրսգրում, բ) առանց նախապայմանների հարկային ապառքների վճարման սառեցում որոշակի ժամկետով, ասենք՝ հինգ տարով, գ) պետությանը պատկանող մյուս կառույցներին ու կազմակերպություններին ձեռնարկությունների պարտքերի երկարաժամկետ սառեցում: Սակայն այս միջոցառումը կարող է դրական արդյունքներ տալ, եթե միաժամանակ կատարվեն երկու կարեւոր պայմաններ՝ 1. ապառք ունեցող ձեռնարկությունների համար ապահովվի ներդրումներ անելու եւ ընթացիկ հարկերը վճարելու հնարավորություն, 2. խստացվի պատասխանատվությունն ու հարկային վարչարարությունը հաշվանքի «նոր» կետից հարկեր չվճարող սուբյեկտների նկատմամբ:

Բարեփոխումների մյուս ուղղությունները

Հարկային ոլորտի վերջին տարիների հատվածական բարեփոխումները ցանկալի արդյունքներ չեն տվել: Հարկային դաշտը վերստին շարունակում է լինել անհստակ ու անարդյունավետ: Այդ պատճառով առաջիկայում անհրաժեշտ է էապես պարզեցնել հարկային համակարգը այն հաշվով, որ զգալիորեն կրճատվեն հարկերը, ծանրության կենտրոնը անուղղակի հարկերից (ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ) տեղափոխվի ուղղակի հարկերի (եկամտահարկ, շահութահարկ եւ այլն) վրա: Հարկային ոլորտի հետագա բարեփոխումների արդյունքում պետք է շոշափելի կերպով բարձրանա հարկային համակարգի կայունության եւ կանխատեսելիության աստիճանը, միեւնույն ժամանակ պետք է քայլեր ձեռնարկվեն հարկային վարչարարության խստացման՝ բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար հարկման հավասար պայմաններ ստեղծելու առումով: Հարկային քաղաքականության բարեփոխման հիմքում պետք է դրված լինի, նախեւառաջ, հարկային օրենսդրության կատարելագործումը, որի առանցքը ՀՀ հարկային օրենսգրքի մշակումն ու ընդունումն է:

Հարկային բարեփոխումների նպատակներից մեկն էլ պետք է լինի տնտեսության վրա իրական հարկային բեռի թեթեւացումը: Ներկայումս հարկային բեռը տատանվում է ՀՆԱ-ի 14-15 տոկոսի սահմաններում, որը, այլ հավասար պայմաններում, շատ ցածր ցուցանիշ է՝ համեմատած նույնիսկ ԱՊՀ երկրների հետ: Անհրաժեշտ է հարկային բեռը հասցնել ՀՆԱ-ի 20-22 տոկոսին, ինչը ենթադրում է՝ ա) հարկատուների վրա ընդհանուր հարկային բեռի հավասարաչափ բաշխում, բ) պետական բյուջեի ընդհանուրի հարկային մուտքերի մեջ ուղղակի հարկերի տեսակարար կշռի ավելացում, գ) ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկի ավելի ցածր, միասնական դրույքաչափի սահմանում՝ այն իջեցնելով 13-14 տոկոսի, դ) 2-3 տարվա ընթացքում ավելացված արժեքի դրույքաչափի աստիճանական իջեցում ներկայիս 20 տոկոսից մինչեւ 12-14 տոկոսի, եւ, դրան զուգահեռ, հարկերի հավաքելիության մակարդակի բարձրացում եւ այդ ճանապարհով տնտեսության ստվերայնության կրճատում, գ) հարկային բագայի, հարկերի հաշվարկման ու վճարման մեխանիզմների առավելագույն միասնականացում:

Հարկային բնագավառի ռազմավարական լուծումները

Հարկային քաղաքականության բարեփոխումների ենթատեքստում անհրաժեշտ է այն գործիք դարձնել ակտիվ արդյունաբերական քաղաքականության համար: Այդ պատճառով անհրաժեշտ է հարկային քաղաքականության մեջ կիրառել տարբերացված մոտեցումներ՝ գործադրելով հարկային խթանների շերտավորված համակարգ:

Ստեղծված իրավիճակում նպատակահարմար է չաշխատող ու անարդյունավետ ձեռնարկությունների նկատմամբ կիրառել ոչ թե սնանկացումների՝ ոչինչ չտվող գործելաոճը, այլ այնպիսի հարկային ռեժիմ սահմանել, որը միաժամանակ հարկադրի եւ խրախուսի միջոցների արդյունավետ տնօրինումն ու ավելորդ գույքից ձերբազատումը:

Այս խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է՝ ա) ներդնել չաշխատող ձեռնարկությունների հարկման պրոգրեսիվ սանդղակ՝ առաջին տարվա համար սահմանելով նրանց հիմնական միջոցների եւ գույքի արժեքի 20 տոկոսի չափով գույքահարկ, երկրորդ տարվա համար՝ 60 տոկոս, իսկ երրորդ տարվա համար՝ 100 տոկոս գույքահարկ, բ) աշխատող ձեռնարկությունների համար եւս բարձրացնել գույքահարկը այն հաշվով, որ ավելորդ ռեսուրսների տնօրինումը դառնա աննպատակահարմար:

ՀՀ հարկային քաղաքականության կատարելագործման կարեւորագույն ուղղություններից մեկը պետք է դառնա այդ ոլորտում առկա չարաշահումների եւ կոռուպցիայի հաղթահարումը: Այդ նպատակով հարկ է ներդնել հարկատուների կողմից ինքնուրույն հարկեր վճարելու մեխանիզմը, երբ տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարման ենթակա հարկերի ծավալները գնահատում է ոչ թե ինքը՝ տնտեսվարողը, ոչ թե հարկային տեսչությունը, այլ երրորդ կողմը՝ ի դեմս նման լիազորություն ունեցող որեւէ աուդիտորական կազմակերպության:

Հարկային քաղաքականության կատարելագործումը ենթադրում է՝ ոչ միայն ֆունկցիոնալ, այլ նաեւ՝ տարածքային առումով արդյունավետության բարձրացում: Այդ նպատակով անհրաժեշտ է հարկային օրենսդրությունը տարբերակել՝ ելնելով հանրապետության մարզերի խիստ անհամաչափ զարգացման փաստից, ինչպես նաեւ նրանցում առկա ներդրումների ու գործարար ակտիվության տարբեր մակարդակներից: Ելնելով այս վիճակից եւ նկատի ունենալով տարբեր տարածքային գոտիների զարգացման մակարդակների համահարթեցման, ինչպես նաեւ ներդրումները ավելի թույլ զարգացած մարզերի օգտին վերաբաշխելու հրամայականը՝ անհրաժեշտ է վերջիններիս համար հարկման ավելի ցածր դրույքաչափեր սահմանել: Բացի դրանից, հարկավոր է հանրապետության որոշակի տարածքներ (աղետի գոտի, հարավային շրջաններ) հայտարարել ազատ տնտեսական գոտի եւ ներդրումների համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծել:

Գործարք՝ բաժանորդի հաշվին

«ԱրմենՏելում» կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են մեծաթիվ չարաշահումներ: Այդ մասին կառավարությունը ամիսներ առաջ հայտարարեց՝ պետք է վնասը փոխհատուցվի, այլապես հարցը կլուծվի դատական կարգով: Մինչ այժմ, սակայն, ոչինչ չի արվել: Օրերս կառավարությունը «ԱրմենՏելի» հետ բանակցությունների արդյունքում հրապարակեց նոր՝ իջեցված սակագներ: Այս ամենը Անդրանիկ Մանուկյանը վերագրեց իր «փայլուն» աշխատանքին եւ «ինտենսիվ» բանակցություններին:

Ամենեւին դժվար չէ եզրակացնել, որ սակագները փոքր-ինչ իջեցնելով է հունական կողմը համոզել մեր կառավարությանը: Մի տարբերակ, որ ծեռնտու է երկուստեք. այլեւս խոսք չի լինի փոխհատուցման մասին, եւ ՀՀ կառավարությունն էլ ծեռք կբերի երկրի համար կարեւոր խնդիրների լուծմանը հետամուտ լինողի համբավ: Ստորեւ ներկայացված թվային տվյալները ասվածի հիմնավորումն են:

Իջեցվել է հեռախոսակապի բաժանորդագրության գինը 20 հազարից 10 հազար դրամ (քաղաքացիների համար) եւ 24 հազարից 12 հազար դրամ (իրավաբանական անձանց համար): Միջազգային հեռախոսակապի որոպեավճարը Եվրոպա, ԱՄՆ, Կանադա եւ Մերձավոր Արեւելք 1,92 ցենտից իջեցվել է 99 ցենտի, իսկ մնացած պետությունների համար 2,4 ցենտից 1,2 ցենտի: Հուլիս ամսին բջջային հեռախոսակապի որոպեավճարը 18 ցենտից կդառնա 15 ցենտ, սեպտեմբեր ամսից 13 ցենտ: Ըստ մոտավոր հաշվարկների, սակագների այս նվազեցումներից «ԱրմենՏելը» տարեկան 50 մլն վնաս կկրի: Զուգահեռաբար ներկայացնենք նաեւ միջգերատեսչական հանձնաժողովի տեղեկանքը, որը ամիսներ առաջ հրապարակվեց կապի ոլորտում կառավարության գործունեությունն ուսումնասիրող խորհրդարանական հանձնաժողովի նիստի ընթացքում (մինչ այժմ մեր կառավարությունը սպասում է հունական կողմի պատասխանին): Ուսումնասիրությունների արդյունքում, 2001 թ. մարտի 20-ից աշխատանքներ ծավալած միջգերատեսչական հանձնաժողովը 50 էջանոց տեղեկանքում նշել է, որ «ԱրմենՏելում» կան խախտումներ եւ չարաշահումներ, որոնց վերաբերյալ գործերը կուղարկվեն դատախազություն, իսկ պետությանը հասցված վնասը կվերականգնվի դատական կարգով. «ԱրմենՏելում» կապիտալ ներդրումներն ուսումնասիրող աշխատանքային խմբի ղեկավար Սերժ Սարգսյանը հայտարարեց, որ 100 մլն դոլարի չափով ներդրումներ չեն կատարվել, մեծաքանակ սարքավորումներ Հայաստան են բերվել քառակի թանկ գներով, որոշ ծախսեր եւ շինարարական աշխատանքներ ծեւակերպվել են որպես ներդրում: Մինչ այժմ տեղեկանքի վերաբերյալ հունական կողմը դեռ պատասխան չի տվել, սակայն մոտ կանգնած աղբյուրները վկայում են, որ, ըստ «ԱրմենՏելի», նշված չարաշահումների չափը չի համապատասխանում իրականությանը: Այս ամենը վկայում է, որ չի բացառվում փոխզիջումների տարբերակը: Իջեցնելով կապի ոլորտի սակագները, թերեւս, ՀՀ կառավարությունն ու հունական կողմը խնդիրը լուծված կհամարեն, այլապես տեղեկանքի վերաբերյալ «ԱրմենՏելի» պատասխանը ավելի վաղ պետք է ստացված լիներ: Փաստորեն, բանակցությունները հանգեցրին սակագների իջեցմանը, որը երկու կողմին էլ ձեռնտու է. ՀՀ կառավարությունը որպես 10 տոկոսի բաժնետեր, ցույց է տալիս, որ պաշտպանում է ժողովրդի շահերը, իսկ հունական կողմը շարունակում է, առանց լուրջ ներդրումների, իր բիզնեսից շահույթ ստանալ:

Այս փաստերն են առայժմ տեսանելի, սակայն չեն բացառվում այլ գործարքներ ու պայմանավորվածություններ եւս, որոնք առայժմ չեն դրսեւորվում: Արդեն իսկ լրացել է կապի ոլորտում ՀՀ կառավարության գործունեությունն ուսումնասիրող Աժ ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետը, եւ այս եռօրյա նիստի ընթացքում կներկայացվի վերջնական եզրակացությունը: Հնարավոր է այդ ընթացքում հունական կողմը արդեն պատասխան տա:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարությունը հայտարարել է. «Մենք վերջնական դիրքորոշում կարտահայտենք հունական կողմի պատասխանից հետո, բայց որպես 10 տոկոսի բաժնետեր թույլ չենք տա, որ մեր շահերը ոտնահարվեն»:

Հայ «տուրիստները» արտասահմանում

ՆԱԻՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Շատ երկրներում տուրիզմով զբաղվող կազմակերպությունները, եթե չեն նպաստում իրենց պետության մեջ զբոսաշրջության զարգացմանը, այլ միայն «արտահանում» են զբոսաշրջիկների, պարտավոր են դադարեցնել գործունեությունը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեզանում գործող տուրիստական բազմաթիվ գործակալությունները ոչ միայն չեն նպաստում տուրիզմի համակողմանի զարգացմանը, այլեւ նրանց ստվար մասը զբաղված է ընդհատակյա ձեւով երկրից արտագաղթ կազմակերպելով՝ քաջ գիտակցելով, որ մեկնողներն այլեւս չեն վերադառնալու:

Նպատակը փախստականի կարգավիճակ ստանալն է, ինչն այնքան էլ հեշտ չէ: Հատկացված կացարաններում ու դպրոցներում աշխատում են հատուկ հայ մատնիչներ, ովքեր փորձում են ճանաչել դիմողին, պարզել նրա ինքնությունը, բացահայտել կեղծարարությունը, տարիներով հետեւում են ու հարցաքննում: Փախստականներին ապրուստի միջոցներ հատկացվում են, սակայն չի թույլատրվում աշխատել:

Ահեղանիզմն արդեն մշակված է: Մարդիկ հիմնականում ձգտում են գնալ Շենգենի անդամ երկրներ, ուր զգալիորեն պարզեցված է մի երկրից մյուսն անցնելը (շենգենյան համաձայնագրի երկրներից են Հոլանդիան, Ֆրանսիան եւ այլն), սակայն բավական գումար է անհրաժեշտ վճարել մուտքի թույլտվություն ստանալու համար, եւ որպեսզի դիմողները այս կամ այն երկրի դեսպանություններին չդիմեն, այդ պարտականությունը ստանձնում են տուրիստական կազմակերպությունները: Նրանք հավաքում են երկրից գնացողների անձնագրերը, վերցնում են գումարը, բայց անձնագրում մուտքի վիզա չեն նշում: Փոխարենը խոստանում են ապահով տեղ հասցնել: Այդ «տեղ հասցնելու» ճանապարհները բավական էժան են իրենց, սակայն շատ թանկ՝ տուրիստի անվան տակ երկրից հեռացողների համար:

Նման զոհերից մեկը՝ Մարզպետունի Վարդանյանը, ներկայացնում է իր «ողիսականը»: Տուրիստական գրասենյակներից մեկը նրա ընտանիքից 5000 դոլար է վերցրել արտասահման տանելու համար: 60-ից ավելի նման ընտանիքների Դոնեցկ հասցնելուց հետո հնարավոր չի լինում սահմանն անցկացնել, քանի որ դա արվում է անօրինականորեն: Պայմանավորվածություններ են լինում նաեւ սահմանապահների հետ, բայց քանի որ դա էլ փող արժե, «զբոսաշրջության» հնարամիտ կազմակերպիչները դիմում են ավելի հեշտ ուղիների՝ մարդկանց սահմանից այն կողմ են հասցնում անտառների միջով՝ միս տեղափոխող մեծ մեքենաների սառնարաններում տեղավորելով եւ այլն: Այդ անգամ հնարավոր չի լինում կիրառել ընդունված ձեւերից մեկը եւ խումբ առ խումբ Դոնեցկ հասած ընտանիքները ստիպված են լինում ամիսներով մնալ այդ քաղաքում՝ գրանցում չունենալու պատճառով չկարողանալով դուրս գալ հյուրանոցից, ու յուրաքանչյուր սենյակում երեք ընտանիք միասին են ապրում: Երկար դեգերելուց հետո նրանց հաջողվում է վերադառնալ Հայաստան՝ չհասնելով նպատակակետին, հետ չստանալով վճարված գումարները եւ հույսով, որ առաջիկայում կրկին գնալու հնարավորություն կընձեռվի: Այդպես անցել է երեք տարի: Նույն տուրիստական գրասենյակը հիշյալ ընտանիքին խոստացել է մեկ ամսից հասցնել իր ցանկացած երկիրը, եւ դարձյալ պարզ չէ՝ արդյո՞ք դա նրան կհաջողվի:

Կարող է հարց առաջանալ, թե ինչու՞ մարդիկ չեն բողոքում նման անօրինականությունների դեմ: Նախ՝ որովհետեւ տուրիստական այդ «օֆիսները» ապօրինի գործարքների մեջ են մտնում՝ կրելով ազդեցիկ շրջանակների հովանավորությունը, որից միայն խիստ արտառոց դեպքերում կարող են զրկվել, հետո էլ՝ նրանց ազատազրկմամբ իրենք, միեւնույն է, հետ չեն ստանում վճարած ոչ փոքր գումարը: Իսկ չբողոքելով՝ գոնե հույս են փայփայում, որ կամ նորից կգնան, կամ գումարը հետ կստանան:

Մի ուրիշ ընտանիքի դեպքում տուրիստական այլ կազմակերպություն 6000 դոլարով հասցնում է Գերմանիա՝ համաձայնելով, որ գումարի մի մասը վճարվի Երեւանում, մյուսը՝ Բեռլինում: Սակայն տեղ հասնելով՝ ամուսինները փորձում են գումարի մյուս մասը չտալ՝ պատճառաբանելով, որ իրենք ոչ թե խոստացածի համաձայն ապահով են հասցնում՝ այլ երեք երեխաներին գրկած մի քանի օր քայլել են դժվարանցանելի անտառներով:

Այնուհանդերձ, կազմակերպությունը ստացել է գումարը՝ սպառնալով տեղական իշխանություններին բացահայտել, թե ինչ նպատակով եւ ինչպես է ընտանիքը գտնվում Գերմանիայում:

Առաջին հերթին նրանք թաքցնում կամ միտումնավոր կորցնում են իրենց անձնագրերը եւ տեղական իշխանություններին, Կարմիր խաչի ճամբարներում ներկայանում որպես հայի եւ ադրբեջանցու խառնուրդ, որին հալածում են երկու երկրներում, փոքրամասնությունների ներկայացուցիչ, կրոնական աղանդի կրող եւ այլն: Նպատակը փախստականի կարգավիճակ ստանալն է, ինչն այնքան էլ հեշտ չէ: Հատկացված կացարաններում ու դպրոցներում աշխատում են հատուկ հայ մատնիչներ, ովքեր փորձում են ճանաչել դիմողին, պարզել նրա ինքնությունը, բացահայտել կեղծարարությունը, տարիներով հետեւում են ու հարցաքննում: Փախստականներին ապրուստի միջոցներ հատկացվում են, սակայն չի թույլատրվում աշխատել: Բայց չէ՞ որ հայերը վաստակելու համար են հասել այստեղ, եւ քանի որ օրինական ճանապարհով դա հնարավոր չէ, բացվում են անօրինականության դռները: Խիստ տարածված է գողությունը, «ռեկետ» կոչվածը, եւ հիմնականում ընկերներն են միմյանց «քցում»: Գերմանիայում, օրինակ, քրեական գործ հարուցվում է գողության տասներորդ դեպքից հետո միայն (մինչ այդ սոսկ արձանագրվում է), բայց թեկուզ մեկ անգամ պարզելով, որ փախստականը աշխատում է, նրան երկրից արտաքսում են, որպեսզի սոցիալական լարվածություն չստեղծվի եւ օտար էժան աշխատուժի պատճառով իրենց քաղաքացին անգործ չմնա:

Տարօրինակ հոգեբանություն է: Երբ հարցնում ես փախստականի կարգավիճակ ստանալու նպատակով Հայաստանից գնացածներին, թե այդպիսի ստորացումների, խայտառակությունների ու չարչարանքների գնով ինչու՞ են հեռանում երկրից, պատասխանում են՝ ընդամենը երեխայիս համար մի կտոր հաց ճարելու: Եթե իրոք խոսքը «ընդամենը մի կտոր հաց» ճարելու մասին է, ապա այն հայրենիքում էլ կարելի է վաստակել՝ առանց բազմապիսի այլասերական կերպարներ ընդունելու: Եթե մտածում են լավ ապրելու մասին, ապա դժվար թե հանցագործությամբ, այն էլ՝ եվրոպական երկրներում դղյակներում ապրեն: Իսկ այ, երեխայի ապագան, որն իսկապես շատ կարեւոր է, նրանք խորտակում են հենց այս կերպ: Ինչո՞վ է առավել օտարը, որ քո երեխան պիտի դառնա նրա ստրուկը, արհամարհվի ու հալածվի, մինչդեռ վճարված գումարով այդ նույն երեխայի համար կարելի է սեփական երկրում որոշակի բարվոք պայմաններ ստեղծել:

ԸՆԿԵՐՈՒՀԻՆ

Մարդկային հոգսը անսպառ է

Բնակչության սոցիալական խնդիրների եւ անարդարության վերաբերյալ հարցերով ՀՅԴ «Սիմոն Վրացյան» կենտրոնում ԱԺ ՀՅԴ խմբակցության պատգամավորները յուրաքանչյուր հինգշաբթի շարունակում են ընդունելություն կազմակերպել:

Երեկվա հանդիպումն անցկացրեց պատգամավոր Մուշեղ Միքայելյանը, որին դիմող քաղաքացիները արծարծում էին նեղ անձնականից մինչեւ գլոբալ հարցեր: Շենգավիթի բնակիչ Դուխիկ Պողոսյանի համար անհասկանալի էր, թե ինչու են նպաստ ստանալու համար համապատասխան փաստաթղթերով ներկայացրած իր խնդրանքը առանց որեւէ պատճառա-

բանության մերժել: Պարոն Միքայելյանը նշված հարցով դիմեց Շենգավիթի թաղապետարան, որտեղ խոստացան շտկել թյուրիմացությունը:

Էդուարդ Մանասարյանը բողոքում էր, որ որդին որպես վարորդ աշխատել է «Գույք» հիմնարկությունում եւ ամսական ընդամենը 8000 դրամ աշխատավարձը մեկ տարի շարունակ չի ստացել, ընդ որում՝ նրան ոչ թե կտրուկ մերժում են, այլ տարբեր պատճառաբանություններով երկարաձգում վճարումը: Այս հարցով որոշվեց միջնորդական նամակ հղել քաղաքաշինության («Գույք» հիմնարկությունը գտնվում է այս նախարարության ենթակայության ներքո) նախարարի օգնականին:

Լենա Հախնազարյանը դժգոհում էր, որ իր բնակության Հանրապետության 85ա շենքում ապօրինաբար չորրորդ հարկ են կառուցում, նաեւ փորձում են տնակների տեղադրմամբ վերացնել բակի կանաչապատ տարածքը: Մաքսիմ Ղուկասյանին անհանգստացնում էին համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարի հարցերը:

Նման հանդիպումների առթիվ պարոն Միքայելյանը նկատեց, որ պետք է օգտագործել ընձեռված հնարավորությունը մարդկանց օգնելու, ժողովրդի հետ շփվելու համար, եւ որպեսզի բնակչության մեջ տիրող հուսահատությունն ավելի չխորանա, անհրաժեշտ է առաջ քաշել այնպիսի հարցեր եւ հիմնախնդիրներ, որոնք ներկայացվեն Ազգային ժողովին, կառավարությանը հնարավորություն ստեղծելով բարեփոխելու համակարգը:

Սեփ. լր.

Գովազդ՝ հոգուր արտագաղթի

Արտագաղթի կասեցման մասին ելույթների պակաս այսօր չի զգացվում, մինչդեռ քարոզչությունը լայն թափ է ստացել, եւ խոսքը վերաբերում է հիմնականում «Գրին քարտ-ի» ԱՄՆ եւ Կանադա մշտական բնակություն խոստացող անվճար խաղարկության «գրավիչ» գովազդին: Գովազդում ասվում է ամեն ինչ, իսկ ահա իրենց գործունեության կարեւոր կողմերի մասին կազմակերպությունն աշխատում է չխոսել: Այս մասին՝ ավելի ուշ:

Տվյալ հեռուստատեսությամբ, ռադիոեթերով անընդմեջ պտտվող գովազդային հոլովակներն, անշուշտ, շահույթ ապահովում են, եւ այս դեպքում գովազդից բխող հետեւանքները երկրորդական են դառնում: ԶԼՄ-ով գովազդ պատվիրելու համար մեծ գումարներ, բնականաբար, շրջանառվում են, մինչդեռ հասարակական տրանսպորտում նույն կազմակերպության գովազդային պաստառների մեծաքանակ առկայության փաստը փոքր-ինչ կասկածելի թվաց: Մասնավորապես թիվ 2 ձեռնարկության N18 երթուղուն պատկանող ավտոբուսի վարորդն այն հարցին, թե արդյոք կոնկրետ պայմանավորվածություն կա՞ իրենց ձեռնարկության եւ վերը նշված կազմակերպության միջեւ, պատասխանեց, որ ոչ մի պայմանավորվածություն չկա, պարզապես «լավ ընկեր-տղաներ» են, խնդրում են, մենք էլ չենք մերժում, իսկ թե դրա համար պե՞տք է վճարեն չգիտենք, մենք էդ գովազդից գլուխ չենք հանում: Մերոնք գլուխ չեն հանում, իսկ ովքեր գլուխ են հանում, փորձում են բաց չթողնել շահավետ առիթը եւ, օգտվելով մեր վարորդների անտեղյակությունից, օձի լեզու թափելով, իրենց իսկ բնութագրած «ազգանպաստ» գործը առաջ տանել: Քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետի Ա. Բարսեղյանի համար խնդիրը զարմանալի թվաց. «Տվյալ ձեռնարկությունը այլեւս քաղաքապետարանի ենթակայության տակ չէ, բայց դա չի նշանակում, որ ցանկացած մեկը կարող է մեքենայի սրահում գովազդի անվան տակ փակցնել այս դեպքում՝ արտագաղթը խթանող գովազդ: Պատճառը համապատասխան օրենքի բացակայությունն է, դրա մասին պետք է մտածել»:

Իսկ ի՞նչ են մտածում ԱՄՆ-ում եւ Կանադայում տուրիզմի, ուսման, մշտական բնակության եւ աննկարագրելի ապագա խոստացող «Գրին քարտի» անվճար խաղարկություն անցկացնող կազմակերպության ներկայացուցիչները: Վերջիններիս տված կցկտուր տեղեկություններից պարզ դարձավ, որ իրենք շահույթ չակնկալող կազմակերպություն են եւ «մտահոգված» են միայն մեր ժողովրդի սոցիալական վիճակի բարելավման հարցերով: Ինչ խոսք, գործունեության նպատակը ողջունելի է, բայց այն փաստը, որ մեր ժողովրդի լուսավոր ապագայի ողջ ծանր բեռը իրենց ուսերին են վերցրել օտարերկրացիները, որոնք իրենց մարդասիրական նախաձեռնությունը հիմնավորում են «որտեղ հաց, էնտեղ կաց» սկզբունքով, թերեւս անհանգստանալու տեղիք է տալիս: Դիմողների կոնկրետ թվի մասին նրանք նույնպես լռեցին ավելացնելով, որ ոչ մի նման կազմակերպություն ինֆորմացիա երբեք չի տրամադրի, միաժամանակ չմոռացան նշել, որ պատրաստվում են ավելի լայն թափով գովազդային արշավ սկսել:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

ՆԳՆ-ի ներքին գործերը

Ներքին գործերի նախարարության աշխատակիցները, մասնավորապես՝ ղեկավար անձնակազմը կարծես թե բառացի են ընկալում իրենց գերատեսչության անվանումը եւ զբաղվում բացառապես ներքին գործերով:

Սոնա Տրուզյան

Կարելի է չզարմանալ, որ տասնյակ անձանց սպանությունները կազմակերպելու մեջ մեղադրվող Վանո Սիրադեղյանը հանգիստ փախավ իր տանից ճիշտ այն ժամանակ, երբ Ազգային ժողովում քննարկվում էր նրան պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու հարցը:

Ասենք՝ ներքին կարգով հնարավորություններ ընձեռում, որ մինչեւ մահապատիժ նախատեսող քրեական հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձինք հեռանան եւ խուսափեն արդարադատությունից, ինչպես, օրինակ, էքսնախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի թիկնազորի ղեկավար Ռոմեն Ղազարյանի (Բուդո) եւ ՆԳ նախկին նախարար Վանո Սիրադեղյանի պարագայում: Ասվածի վկայությունն է Բուդոյի գտնվելու վայրի մասին ԱԺ պատգամավոր Աղասի Արշակյանի հայտնած տեղեկությունների նկատմամբ ՆԳՆ-ի դրսեւորած անտարբերությունը: Իսկ այդ տեղեկությունները առավել քան կոնկրետ էին, որոնց հավաստիությունը ստուգելու համար, կարծում ենք, բավարար էր նաեւ մի քանի ժամը: «Դեռեւս 1998 թվականին Հենրիկ Խաչատրյանին, ապա նաեւ Աղվան Հովսեփյանին ասել եմ՝ տվեք սանկցիայի օրինակը, եւ ես իմ, իմ ընկերների ուժերով գնամ Բուդոյին բերեմ: Այդ ժամանակ Բուդոն աշխատում էր Ելցինի թիկնազորում: Դա բոլորին էլ հայտնի է: ... Պուտինի նախագահ ընտրվելուց հետո Բուդոն ՌԴ-ի ՆԳ նախարարություն տեղափոխվեց աշխատելու եւ մինչեւ վերջերս, մի քանի ամիս առաջ էլ շարունակում էր այնտեղ պաշտոնավարել»,- Մուշեղ Սաղաթելյանի դեմ հարուցված քրեական գործով մարտի 25-ի դատական նիստում հայտարարել էր Աղասի Արշակյանը՝ շեշտելով, որ 1996 թվականի սեպտեմբերի 25-ի լույս 26-ի գիշերը ՀՀ ՆԳՆ 6-րդ վարչության հերթապահ մասում իր նկատմամբ կիրառված ֆիզիկական բռնություններին մասնակցել է ոչ միայն Մուշեղ Սաղաթելյանը, այլ նաեւ Բուդոն:



Հարկ է նշել, որ Ռոմեն Ղազարյանի մեղսակցության մասին բացի Աղասի Արշակյանից ցուցմունք են տվել նաեւ այդ բռնությունների թիրախ դարձած մի քանի այլ անձինք: Ասել է թե՝ Մուշեղ Սաղաթելյանի քր. գործով դատաքննության ընթացքում հիմնավորվում է նաեւ նրա կատարած հանցանքը: Ու պարզ տրամաբանությունը հուշում է, որ արդեն երեք տարի հետախուզման մեջ գտնվող Ռ.Ղազարյանի գտնվելու վայրի մասին տեղեկությանը մեր ՆԳՆ-ն պետք է անմիջապես արձագանքեր ու պարզեր դրա հավաստիությունը: Մինչդեռ, ի պատասխան տողերիս հեղինակի հարցման, ՀՀ ՆԳՆ լրատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից ընդամենը տեղեկացրին, որ պատգամավորի հայտարարությանը արձագանքել են, ու իրականացվում են համապատասխան օպերատիվ աշխատանքներ: Եվ սա այն դեպքում, երբ հայտարարության հնչեցումից անցել էր շուրջ 10 օր: Այսինքն՝ 10 օրն անգամ բավարար չէր եղել մեր իրավապահ մարմիններին՝ պարզելու, թե արդյո՞ք իրենց կողմից հետախուզման մեջ գտնվող Ռոմեն Ղազարյանը աշխատում է ՌԴ ՆԳՆ-ում: Ուստիեւ, հակված ենք կարծելու, որ նրան հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ-հետախուզական աշխատանքներ չեն էլ կատարվում, եւ իրականությանն առավել մոտ է Աղասի Արշակյանի հետեւյալ կարծիքը. «Բուդոն սուս է անում, մեր իրականությանը չի խառնվում, Բուդոյով զբաղվող չկա»:

Կարելի է նաեւ չզարմանալ, որ տասնյակ անձանց սպանությունները կազմակերպելու մեջ մեղադրվող Վանո Սիրադեղյանը հանգիստ փախավ իր տանից ճիշտ այն ժամանակ, երբ Ազգային ժողովում քննարկվում էր նրան պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու հարցը: Անկարելի է նաեւ ակնկալել, որ ՆԳՆ-ն լուրջ միջոցներ կձեռնարկի՝ պարզելու, թե միջազգային հետախուզման մեջ գտնվող Սիրադեղյանի պատմվածքներն ու հոդվածները ինչպես են հայտնվում մամուլում, իսկ վերստին պատգամավորության թեկնածու առաջադրվելու նրա գրավոր հայտարարությունն ու Սիրադեղյանի եւ նրա ընտանիքի սեփականության, վերջին մեկ տարվա եկամուտների մասին հայտարարագիրը՝ հիշականների մոտ, քանզի դրանք եղել են թիվ 75 ընտրատարածքում Սիրադեղյանին իբրեւ պատգամավորության թեկնածու առաջադրելու՝ Տավուշի մարզային ընտրական հանձնաժողովին հիշականների ներկայացրած փաստաթղթերի մեջ: Ըստ երեւույթին, դեռ պետք է շնորհակալություն հայտնենք ՆԳՆ անձնագրային եւ վիզաների վարչությանը, որ չեն տվել տեղեկանք այն մասին, որ շուրջ երկու տարի հետախուզման մեջ գտնվող Վանիկ Սմբատի Սիրադեղյանի վերջին 5 տարիների մշտական բնակության վայրը Հայաստանն է...

27

Ո՞րն է իրավահաջորդների ակնկալիքը

Որքան էլ տարօրինակ հնչի, այդուհանդերձ, փաստ է, որ «Հոկտեմբերի 27»-ի գործով տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչներն սկսել են այլեւս չթաքցնել իրենց քաղաքական ակնկալիքները բացահայտ հայտարարելով, որ իրենց ամենեւին չի հետաքրքրում, թե այդ ոճրագործության կազմակերպման գործում ամբաստանյալներից ո՞վ է ավելի մեծ դեր ունեցել Նաիրի Հունանյա՞նը, թե՞ էդիկ Գրիգորյանը:

«Ո՞րն էր տուժողի իրավահաջորդներին կանչելու նպատակը. որ ասեիք հանցագործության կազմակերպիչը էդիկ Գրիգորյա՞նն է: Ի դեպ, դա նրանց չի հետաքրքրում: Կանչեցիք, բայց ոչ մի նոր բան չասացիք»,- «Հոկտեմբերի 27»-ի գործով ապրիլի 8-ի դատական նիստում ամբաստանյալ Վռամ Գալստյանին այսօրինակ հարց ուղղեց Սամվել Դեմիրճյանի շահերի ներկայացուցիչ Աշոտ Սարգսյանը: Նա անգամ ավելացրեց. «Հնարավո՞ր է, որ այն երկու ժամվա ընթացքում, մինչեւ եկան տուժողների իրավահաջորդները (Վ.Գալստյանի խնդրանքով դռնփակ նիստին մասնակցելու համար.- Ս.Տ), եղել է որոշակի ազդեցություն, եւ դռնփակ նիստում չհայտնեցի՞ք ձեր ունեցած տեղեկությունները»: Ակնարկը, կարծում ենք, առավել քան պարզ է, եւ ամենեւին բացառված չէ, որ առաջիկայում հնչեն հայտարարություններ այն մասին, թե Վ. Գալստյանը ցանկանում էր դռնփակ նիստում հույժ գաղտնի ու կարեւոր տեղեկություններ հրապարակել, բայց ահա, ինչ-ինչ ազդեցությունների տեղի տալով, ձեռնպահ մնաց այդ քայլից: Այսինքն կան որոշակի ուժեր, որոնց ձեռնտու չէ այդ տեղեկությունների հրապարակումը, եւ նրանք անգամ դատարանի շենքում ամբաստանյալներին անարգել պահում են իրենց ազդեցության դաշտում: Առավել եւս, երբ Ա. Սարգսյանը նույն նիստում շեշտեց. «Չհանդամը, թե էդիկ Գրիգորյանը չի գլխավոր կազմակերպիչը: Կանչել էիր, որ դա՞ ասես: Մեզ չի հուզում, թե ով է կազմակերպիչը...»: Ասել է թե նրանց հետաքրքրում է միայն կոնկրետ անձանց անունների հնչեցումը, եւ շահարկումների նոր տարափը սկսելիս կանտեսվի նաեւ Վ.Գալստյանի հավաստիացումը, թե նման տեղեկություններ չունի:

Ի դեպ, եթե ըստ փաստաբան Ա. Սարգսյանի՝ Վ.Գալստյանի ցուցմունքներում առանձնապես նորություններ չկան, ապա, ըստ զինդատախազության կան: Եվ, ինչպես տեղեկացրեց զինդատախազության քննչական բաժնի ղեկավար Ա. Հարությունյանը, դատարանին խնդրել են իրենց տրամադրել նաեւ Վռամ Գալստյանի ցուցմունքները, քանզի դրանցում կան ուսումնասիրության ենթակա հանգամանքներ:

Սեփ. լր.

Ջանցանքը հանցանքով չի արդարացվում

Շուրջ մեկ տարի է, ինչ ԼՂՀ բանակի նախկին հրամանատարի տեղակալ, ներկայումս դատապարտյալ Սասուն Աղաջանյանը «Անձի բնավորության հիստերիկ շեշտվածություն, սուբստուպորոզ վիճակ» ախտորոշմամբ գտնվում է Երեւանի բանտային հիվանդանոցում:

Սակայն, մինչ այսօր նրա առողջական վիճակի մեջ որեւէ փոփոխություն չի արձանագրվել. Սասուն Աղաջանյանը շարունակում է անհաղորդ մնալ արտաքին աշխարհին, անշարժ գամված է անկողնուն, արտաքին ազդակներին պատասխան ռեակցիա չի տալիս, իսկ սնուցումը, խնամքը եւ բնական կարիքները հոգալը կատարվում է բացառապես սանիտարական անձնակազմի միջոցով, ինչը հանգեցրել է դատապարտյալի օրգանիզմի հյուծմանն ու կախենիայի: Սակայն նրան առավել մասնագիտացված հիվանդանոց տեղափոխելու եւ առավել մասնագիտացված բուժօգնություն ցուցաբերելու մտադրություն կարծես թե չկա, եւ սա այն դեպքում, երբ ոչ ոք չի երաշխավորում, որ բանտային հիվանդանոցի պայմաններում հնարավոր է փրկել Սասուն Աղաջանյանի կյանքը:

Ավելին, խուսափում են նաեւ Սասուն Աղաջանյանին հաշմանդամության կարգավիճակ տալուց, ինչը ոչ միայն օրենքի, այլեւ մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում է, քանի որ Սասուն Աղաջանյանի առողջական վիճակի մեջ շուրջ 1,5 տարի է, ինչ որեւէ փոփոխություն չի արձանագրվում (ավելին 2000 թ. հուլիսի 29-ից սկսած փոխվում է միայն դեպի վատը), իսկ ըստ սահմանված կարգի 4 ամսից ավելիի դեպքում բժշկական հանձնաժողովը տալիս է հաշմանդամության կարգ: Ասել է թե «Մարտական խաչ» առաջին եւ երկրորդ աստիճանի շքանշանակիր Սասուն Աղաջանյանի առողջական վիճակը, ընդհանրապես կյանքը պատկան մարմիններին բացարձակապես չեն հետաքրքրում, թերեւս բացառությամբ բանտային հիվանդանոցի, քանզի չենք կարող չարձանագրել, որ վերջինիս անձնակազմը մշտական հոգածության տակ է պահում դատապարտյալին: Անգամ հիվանդանոցի պետը դիմել է ՀՀ առողջապահության փոխնախարարին Սասուն Աղաջանյանին համալիր զննության ենթարկելու համար:

Բոլոր այն պատճառաբանությունները, թե Սասուն Աղաջանյանը ընդամենը սիմուլյանտ է եւ, հիվանդ ձեւանալով, նպատակ է հետապնդում խուսափել Արկադի Ղուկասյանի դեմ կատարված մահափորձին մասնակցելու համար քրեական օրենսգրքով նախատեսված պատժի կրումից, ամենեւին չեն կարող արդարացնել նրա նկատմամբ դրսեւորվող անմարդկային վերաբերմունքը: Եվ ԼՂՀ իշխանությունները նրա առողջական ներկայիս վիճակի, հնարավոր վատ հետեւանքների համար կրում են անմիջական պատասխանատվություն: Ճիշտ է Սասուն Աղաջանյանը մինչեւ կալանավորվելը եւս տառապել է մասնավորապես երիկամների սուր հիվանդությամբ, ունեցել ծողվածք, Աֆղանստանում ծառայելու եւ Արցախի ազատագրական պայքարին մասնակցելու ընթացքում մի քանի անգամ վիրավորվել է, ստացել ուղեղի ցնցում, բազմաթիվ կոնտուզիաներ եւ գտնվել բուժման մեջ, սակայն անհերքելի իրողություն է, որ Սասուն Աղաջանյանը ձերբակալվել է գիտակից վիճակում, եւ նրա առողջությունը կտրուկ վատացել է կալանքի տակ գտնվելու ժամանակ: Դա առավել ցայտուն արտահայտվել է 2000 թ. ապրիլի 27-ին, երբ քննչական գործողության կատարման ժամանակ կորցրել է գիտակցությունը, ինչի նկատմամբ պատշաճ վերաբերմունք չի դրսեւորել նախաքննական մարմինը մերժելով Սասուն Աղաջանյանին ստացիոնար բուժման տեղափոխելու պաշտպան Աղաջանյանի միջնորդությունը:

Եթե անգամ ընդունենք, որ Սասուն Աղաջանյանը գիտակցված է իրեն դատապարտել հիվանդության, դանդաղ մահվան, այդուհանդերձ, իշխանությունները պարզապես պարտավոր են մարդասիրություն դրսեւորել եւ ամեն ջանք գործադրել նրան այդ վիճակից դուրս բերելու ու առողջությունը հնարավորինս վերականգնելու համար: Այլապես, իրենք բարոյական իրավունք չեն ունենա դատապարտելու «Մարտի 22»-ը: Գուցե դաժան է հնչում, բայց ի՞նչ տարբերություն մարդուն հրազենի օգնությա՞մբ են փորձում սպանել, թե՞ անտարբերությամբ եւ խիստ անհրաժեշտ բուժօգնությունը չցուցաբերելով...

Ս. Տ.

12-18 ԱՊՐԻԼ, 2002

Անունը կա, ամանումը չկա

Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովում ընդունված բանաձևի համաձայն, նախորդ տարի հունիսին կառավարության որոշմամբ ստեղծվեց «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» (ՀԵՄԿ) հիմնադրամը, որի նպատակը Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, Հայաստանում եւ արտերկրում գործող երիտասարդական կառույցների ակտիվացման միջոցով համահայկական երիտասարդական շարժում կազմակերպելն է:

Աննա ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թեեւ նորաստեղծ հիմնադրամի նպատակները ինքնին ողջունելի եւ ոգեւորիչ են, սակայն այսօր կարծես թե արդեն կան բոլոր «նախադրյալները», որ այն դառնալու է զուտ գեղեցիկ գաղափարներ կրող, վերջին շրջանում խիստ մոդայիկ դարձած «համահայկականության» արդյունքում ծնված հերթական կառույցներից մեկը: Այլապես, այնքան էլ պարզ չէ, թե համանման մեկ այլ կազմակերպության գոյության պարագայում, երբ արդեն սկսել էր գործել 1998-ին ստեղծված Համահայկական երիտասարդական հիմնադրամը (ՀԵՀ), այլեւս ու՞մ էր պետք երկրորդը, մանավանդ եթե դրա գործունեությունն ապահովելու կարողություն այսօր պետությունը չունի:

Փաստ է, որ Հայրենիք-Սփյուռք երկրորդ խորհրդաժողովի նախաշեմին այս համազգային ծրագիրն առայժմ տեղից չի շարժվել, չնայած, ամեն ինչ արված է դրա ներայացուցչականությունն ապահովելու համար: Հիմնադրամի հիմնադիր խորհրդի նախագահը ինքը հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանն է, իսկ խորհրդում, ի դեպ, գրեթե նույն կազմով ընդգրկված են ՀԵՀ խորհրդի անդամները: Այսուհանդերձ, այս տարի պետբյուջեով հիմնադրամի համար նախատեսված 50 մլն դրամից ոչ մի լումա կենտրոնը դեռ չի ստացել: Հատկանշական է նաեւ, որ առ այսօր իր երեւանյան գրասենյակի համար ՀԵՄԿ-ը դեռեւս չի ստացել եւ հիմնական տարածք, ու ամբողջությամբ չի ձեւավորվել աշխատակազմը: Միակ դրական տեղաշարժն այն է, որ ՀԵՄԿ-ին է տրվել Ծաղկաձորի օլիմպիական բազայի երրորդ մասնաշենքը, եւ դրա վերանորոգման շուրջ Լինիսի հիմնադրամի հետ բանակցություններում նախնական համաձայնություն է ձեռք բերվել: Ինչպես տեղեկացրեց հիմնադրամի գործադիր տնօրեն Վահագն Մկրտչյանը, խոսքը շուրջ 2 մլն ԱՄՆ դոլար անհատույց ներդրման մասին է, ինչի արդյունքում օլիմպիական մարզաբազայի երրորդ մասնաշենքը կվերածվի չորսաստղանի կարգի հյուրանոցային համալիրի:

Սակայն համալիրի վերանորոգման նախագծի պատրաստման համար, ինչը կատարվել է նախորդ տարվա աշնանը, կառավարությունը մինչ օրս պարտք է Հայնախագիծ ինստիտուտին: Այսինքն՝ առ այսօր կառավարությունը ոչ մի լումա չի հատկացրել այս համազգային ծրագրին, եւ այն չունի լիարժեք գործունեություն ծավալելու որեւէ հնարավորություն:

Կրկին հարց է ծագում՝ ինչու՞ է ստեղծվել ՀԵՄԿ հիմնադրամը: Գուցե, որ առաջիկա խորհրդաժողովում գեղեցիկ ու ամպագոռգոռ ելույթներում դեկլարատիվ կերպով արձանագրվի, թե ահա, ստեղծվել է համազգային-համահայկական-միջազգային կենտրո՞ն: Ո՞ւմ ենք խաբում:

Միանշանակ է, որ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների աշխուժացումը կարող է իրականություն դառնալ միայն գործող կառույցների միջոցով: Միանշանակ է նաեւ, որ այդ կառույցները պետք է ստեղծվեն ոչ թե հանդիսավոր միջոցառումների ժամանակ հաշվետվություն տալու, այլ կոնկրետ ու նպատակային գործելու եւ իրոք համազգային գաղափարներ կյանքի կոչելու համար: Ուստի մեր պետությունը պետք է ուշադիր ու նախանձախնդիր լինի ոչ միայն նմանօրինակ կազմակերպությունների ստեղծման, այլեւ դրանց կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովման առումով:



ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ 2002 Թ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՐՑԱՏՈՄՍԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՏՈՄՍԻ ՆՄՈՒՇ

1. ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍ

- Միասնական պետության կազմավորումը
- Եգիպտոսը հին եւ միջին թագավորությունների շրջանում
- Եգիպտական պետության հզորացումն ու անկումը

2. ՖՐԱՆԿԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ VII-IX ԴԱՐԵՐՈՒՄ

- Մերովինգների վախճանը
- Կարլոս Մեծի պատերազմները
- Աստծո ընտրյալ կայսրը: Վերդենի բաժանքը
- Կարոլինգյան վերածնունդը

3. ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ ՊԵՏՐՈՍ I-Ի ԵՎ ԵԿԱՏԵՐԻՆԱ II-Ի ՕՐՈՔ

- Պետրոս Մեծի բարեփոխումները
- Հյուսիսային պատերազմը
- Կայսրության հզորացումը Եկատերինա II-ի օրոք

4. ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Յալթայի խորհրդաժողովը
- Գերմանիայի անձնատուր լինելը
- Պոտսդամի խորհրդաժողովը
- Ճապոնիայի պարտությունը: Պատերազմի ռազմաքաղաքական արդյունքները

Յուրաքանչյուր հարց գնահատվում է 5 միավոր:

«Քիմիա - I» տարբերակի նմուշ

1. Քանի՞ լիտր ազոտ պետք է խառնել 1 լ օդին, որպեսզի թթվածնի ծավալային բաժինը փոքրանա 2 անգամ: Օդում թթվածնի ծավալային բաժինն ընդունել 20 %: Պատասխանը հիմնավորել հաշվարկով:

2. Հետեւյալ նյութերից որի՞ մեջ է կապարի զանգվածային բաժինը նվազագույնը.

1. 0,5, *3.* 1,5,
2. 1, *4.* 0,25:

1. Pb_3O_4, *2.* PbO, *3.* $PbCO_3$, *4.* $PbSO_4$:

3. Ավարտել ռեակցիաների հավասարումները, ընտրել այն ռեակցիան, որում ծծմբի միացությունը վերականգնիչ է, եւ տեղադրել գործակիցներն էլեկտրոնային հաշվեկշռի եղանակով.

$H_2SO_{4(խիտ)} + C \rightarrow ...$
$SO_2 + Br_2 + H_2O \rightarrow ...$

Պատասխանում ընտրված ռեակցիայում օքսիդացման հետեւանքով ստացված նյութի մոլային զանգվածն է (գ/մոլ).

1. 98, *2.* 81, *3.*160, *4.* 64:

4. A+B=D համասեռ ռեակցիայի արագության հավասարումն ունի հետեւյալ արտահայտությունը. $V=k\ C_A\ C_B$: Արագության հաստատունի չափողականությունը կլինի.

1. լ/մոլ վրկ, *2.*մոլ/լ վրկ, *3.* $վրկ^{-1}$, *4.* $մոլ^2/լ^2$ վրկ:

5. Սենյակային ջերմաստիճանում եւ նորմալ ճնշման տակ ո՞ր խառնուրդը կպահպանվի մթության մեջ. 1) ֆտորի եւ ջրածնի, 2) բրոմի եւ ջրածնի, 3) քլորաջրածնի եւ բրոմաջրածնի, 4) յոդաջրածնի եւ քլորի, 5) ֆտորաջրածնի եւ բրոմի:

1. 2, 3, 5, *2.* 1, 4, *3.* 2, 3, 4, 5, *4.* 3, 4, 5:

6. Ըստ էլեկտրոնային կառուցվածքի ո՞ր հալոգենի եւ ո՞ր ալկալիական մետաղի իոններին է նման ազոտի (-3) լիցք կրող իոնը.

1. Cl^-, Na^+, 2. F^-, Li^+, 3. F^-, Na^+, 4. Br^-, K^+:

7. Երկու փորձանոթում գտնվում են պղնձի սուլֆատի որոշակի զանգվածներով լուծույթներ: Առաջինի մեջ մտցրել են երկաթի, իսկ երկրորդի մեջ ցինկի հայտնի զանգվածներով թիթեղներ: Որոշ ժամանակ անց թիթեղները հանել են լուծույթներից եւ կշռել ինչպես թիթեղները, այնպես էլ փոխարկումներից հետո մնացած լուծույթները: Պարզվել է, որ երկու փորձանոթների լուծույթների զանգվածները փոխվել են նույն չափով, իսկ երկաթի թիթեղի զանգվածի փոփոխությունը կազմել է a գ, ցինկի թիթեղինը b գ: Վերջիններս փոխհարաբերում են իրար այսպես.

1. a=b, 2. a>b, *3.* a<b, *4.* a=0,1b:

8. Թվարկված նյութերից 1) 2-մեթիլպրոպան, 2) տոլուոլ, 3) բութան, 4) 2,2-դիմեթիլպենտան, ո՞րն է պարունակում առավելագույն թվով առաջնային ածխածնի ատոմներ.

1. 2, *2.* 4, *3.* 3, *4.* 1:

9. Ինչպե՞ս կարելի է իրականացնել 1-պրոպանոլից ացետոնի ստացումը: Նշել այդ գործընթացի ստորեւ բերված փուլերի ճիշտ հաջորդականության համարը.

1. ջրի պոկում, օքսիդացում, վերականգնում,
2. ջրի պոկում, ջրի միացում, օքսիդացում,
3. օքսիդացում, վերականգնում, ջրի պոկում,
4. ջրի պոկում, ջրի միացում, վերականգնում:

Գրել ռեակցիաների հավասարումները:

10. RCOOR' կառուցվածքով էսթերը հանդես է գալիս 9 իզոմեր էսթերների ձեւով: Ընդ որում սահմանային շարքի ռադիկալներից մեկը կարող է լինել ջրածնի ատոմ: Գտնել R եւ R' ռադիկալներում ածխածնի ատոմների գումարային թիվը.

1. 3, *3.* 5,
2. 4, *4.* 6:

11. Գրել փոխարկումների ռեակցիաները նշելով պայմանները
ա) $NH_3 \rightarrow NH_4HCO_3 \rightarrow NaHCO_3 \rightarrow Na_2CO_3 \rightarrow NaHCO_3 \rightarrow NaCl$
բ/ $CaC_2 \rightarrow ? \rightarrow$ բենզոլ $\rightarrow ? \rightarrow$ անիլին $\xrightarrow{HCl}$?

12. Քանի՞ գրամ բյուրեղահիդրատ $Cr_2(SO_4)_3 \cdot 18H_2O$ եւ քրոմի (III) սուլֆատի 15% -անոց լուծույթ պետք է վերցնել նույն աղի 795 գ 20%-անոց լուծույթ պատրաստելու համար:

13. Գլիցինի եւ ալանինի որոշակի զանգվածով խառնուրդն էսթերացնելու համար պահանջվել է 11,5 գ էթիլսպիրտ: Ստացված էսթերների խառնուրդը նատրիումի հիդրոքսիդի հետ փոխազդումից հետո ստացվել է նատրիումական աղերի 25 գ խառնուրդ: Որոշել գլիցինի նյութաքանակը ելային խառնուրդում:

14. 5 լիտր տարողությամբ փակ անոթում փոխազդեցության մեջ է դրվել 22,4 ածխածնի (II) օքսիդը որոշակի զանգվածով քլորի հետ: Որոշել քլորի սկզբնական զանգվածը (գ), եթե ռեակցիան սկսվելուց 3 վրկ հետո ստացված գազային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի 30,5 է, իսկ ֆոսգենի առաջացման արագությունը 0,02 մոլ/լ. վրկ:

Թե ինչն է փրկել Հոմը

Առասպելն ասում է, որ Հոմը սագերն են փրկել, քանի որ նրանց աղաղակները արթնացրել են քնած ժամապահներին, եւ քաղաքը կարողացել է դիմագրավել թշնամու հարձակմանը

Դավիթ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հետագա ժամանակների փիլիսոփաներից մեկը նկատել է, որ Հոմը, իրականում, փրկվել է մշակույթով, որովհետեւ մարդկության գիտակցության մեջ անտիկ աշխարհը մնացել ու ապրում է նախեւառաջ իր մշակութային ժառանգության շնորհիվ:

Իմ բարեկամներից մեկը մի անգամ ասաց, որ կինոն լավագույն այցեքարտն է ցանկացած ժողովրդի համար, որովհետեւ «դրսի հետ» խոսելու նրա հնարավորությունները անհամեմատ մեծ են: Այս մտքին դժվար թե առարկողներ լինեն, բայց մշակութային անվտանգության մասին խոսելիս ավելի մեծ կարեւորություն են ստանում «ներսի» անհրաժեշտությունները:

Եթե այս ելակետից անդրադառնանք հայկական կինոյի փորձառությանը, կհամոզվենք, որ նրա լավագույն նմուշները մինչեւ օրս «աշխատում են» հայի ինքնուրույն տեսակ եւ մարդկային արժեքների մի ամբողջ համակարգ պահպանելու լիցքով: Արդեն մի քանի սերունդ սիրով ու հետաքրքրությամբ հաղորդակցվում է մեր «արխետիպային» կինոնկարների հետ («Եռանկյունի», «Մենք ենք, մեր սարերը», «Սարոյան եղբայրներ»...) ստանալով ազգային ու բարոյական կեցության հիմքերը ամրապնդող այնպիսի ազդակներ, որոնք չեն կարող տալ համաշխարհային կինոարվեստի նույնիսկ ամենակատարյալ երեւույթները, քանի որ սեփական կինեմատոգրաֆը ոչ այլ ինչ է, եթե ոչ սեփական տանը դրված հայելի: Ընդ որում, պատմական նոր ժամանակը միշտ էլ լրացուցիչ բովանդակություն է հաղորդում մեզ արդեն լավ ծանոթ կինոնկարներին: Ավելի քան երեսուն տարի առաջ նկարահանված «Սարոյան եղբայրները» հանկարծ դառնում է նոր մտորումների առարկա, որովհետեւ խոհեր է արթնացնում Հայրենիքի ճանապարհի ընտրության, պետություն կառուցելու եւ պահպանելու մասին անկախ խորհրդային տարիների համար պարտադիր, «գաղափարական լուծումից», որը կարդում ենք այդ կինոնկարում: Այդ ֆիլմի հասակակից «Մենք ենք, մեր սարերը» նորից հիշեցնում է տեսակի անկախության մասին եւ մեջտեղ բերում ազգային հավաքականության ու հենակետերի թեման: Շատ ավելի վաղ նկարահանված «Բարեւ, ես եմ»-ը դառնում է բովանդակ աշխարհի հետ քո անկրկնելի Ես-ով ու երբեք չանհետացող հիշողությամբ հարաբերվելու պատմություն, իսկ «Եռանկյունին» այն բարոյական դարբնոցը, որտեղ թրծվում ենք իբրեւ մարդ ու հայ:

Մշակույթն ինքնին անվտանգություն է: Մարքսիստներն այն համարում են վերնաշենք, իսկ տնտեսությունը՝ բազա, բայց հետաքրքիրն այն է, որ մշակութային հզոր հենակետերի պակաս ունեցող ժողովուրդները առանձնապես չեն կարողանում տնտեսական ու սոցիալական նվաճումների հասնել: Այսպիսի եզրակացության հետ հաշվի նստելու համար բավական է վերհիշել առավել զարգացած երկրների հաստեները թե հեռավոր, թե ներկա ժամանակներում: Նույնիսկ ԱՄՆ-ի տնտեսական հզորացումը նախապատրաստվել է «ամերիկյան երազանքի» ձեւավորումով, որին էլ միտված էր նրանց գրականությունը Կուպերից մինչեւ Ուիթմեն եւ քսաներորդ հարյուրամյակի շեմից ներս անցած Ջեկ Լոնդոն:

Փոքր ժողովուրդների մշակույթը շատ ավելի ծանր բեռ ունի: Եվ շատ ավելի խոր առաքելություն: Ես նկատի չունեմ զուտ ազգային ինքնապահպանության գերխնդիրները, թեպետ դրանց մշտական հրատապությունը ոչ մի կասկած չի առաջացնում: Գեղարվեստը հումանիզացնում է մեզ: Նրա վտանգավոր բացակայության կամ տագնապալի նահանջի դեպքում անխուսափելիորեն կոպտանում է հասարակության դիմագիծը: Օզոնային շերտի հուսալիությամբ մշակույթը պաշտպանում է մեզ ապամարդկայնացման որոգայթներից եւ դառնում ուծացման հեռանկարները բացառող իմունիտետ: Միայն թե չմոռանանք, որ օզոնային շերտը, իր ամբողջ կենսատու հզորությամբ հանդերձ, նուրբ է ու խոցելի, եւ մեր անհեռատես գործունեությունը կամ աններելի վրիպումները կարող են նրա քայքայման պատճառ դառնալ:

Եթե փորձենք մի ընդհանուր ձեւակերպում տալ, ապա խոսքը մեր ունեցած մշակութային կենսատարածության մասին է: Ես ապրում եմ երկու դպրոցների հարեւանությամբ, որոնց միջեւ մի հիանալի գրադարան կար: Մութ տարիներին այն փակվեց, սեփականաշնորհվեց, իսկ հիմա գրադարանի տեղում խանութ է: Ավելի կոպիտ բան, քան դպրոցների միջեւ գործող գրադարանի փակումն է, դժվար է պատկերացնել: Կրթական հաստատությունների կողքին, ինչ-որ մարդկանց մթամիտ որոշումով, վերանում է հենց կրթությունը սնող օջախը: Սա ավելին է, քան մեկ գրադարանի կորուստը: 90-ականների կեսերին այս որոշումն ընդունող պաշտոնյաները կյանք մտնող դեռահասներին ուղղակիորեն ասում էին տեսեք, թե որոնք են մեր նոր առաջնահերթությունները. ոչ թե «ճանաչել զիմաստություն եւ զխրատ», այլ «մեծածախ եւ մանրածախ առեւտուր»...

Ինչ արած, շուկան իր բնույթին հատուկ փոփոխություններ է թելադրում, որոնք շատ հաճախ հաշվի չեն նստում մեր ամենաբարի ցանկությունների հետ, բայց մենք էլ հո կարո՞ղ ենք ավելի հավասարակշռված ու ներդաշնակ լուծումներ գտնել այդ շուկան ներսից քաղաքակրթելով, լինեն մեր լուծումները օրենսդրական թե կազմակերպչական, որոնց արդյունքում էլ ՇԱՀԵՐԻ գիտակցությունը իր ցանկալի լրացումը կստանա ԱՐԺԵՔՆԵՐԻ ազնվացնող գիտակցությամբ: Հակառակ դեպքում, «Աշնան արեւ», «Տարվա եղանակներ» կամ «Մատենադարան» նկարահանել ցանկացողը կմնա իր մտահղացման հետ մենակ, որովհետեւ, ինչպես արդեն համոզվեցինք, մեր նորօրյա ազատ կապիտալը առանձնապես չի շտապում գեղարվեստական եւ ազգային հիմնարար նպատակներ հետապնդող կինեմատոգրաֆ կամ արվեստի որեւէ այլ տեսակ զարգացնելու համար ներդրումներ կատարել: Իհարկե, կապիտալին էլ կարելի է հասկանալ, թեկուզ այն պատճառով, որ այդ կարգի ներդրումները խրախուսող ճկուն օրենսդրություն չկա (Շվեդիան, Լիտվան կամ Ռուսաստանը այդպիսի օրինակներ տալիս են), իսկ այն ֆիլմերը, որոնք մեր աչքերի առաջ ծնվում են շուկայական պատվերների համաձայն, սկսվում են «Բակերից» ու «Հարսնացու...»-ներից եւ վերջանում տեղական մարտաֆիլմով մի գրավիչ ժանրատեսակ, որի դեպքում ես գերադասում եմ ... ամերիկյանը:

Մենք մեր մշակույթի զավակներն ենք: «Ազգային ինքնագիտակցություն» ասվածը հենց մշակութային հասկացություն է: Հակառակ պարագայում ինքնագիտակցություն չկա: Այսօրվա մշակութային թթվածինը երկրով մեկ տարածելու համար հույսներս նախ հեռուստատեսության վրա պետք է դնենք, բայց արի ու տես, որ այստեղ էլ սահմանները փոքրանում են, թեեւ ալիքները բազմանում: Փառք Տիրոջ, «Ութ ու կես» հաղորդաշարը դեռ շարունակում է գիտելիք ու արվեստ ներարկելու իր ծիգը, բայց հազիվ թե կարողանանք համանման հաղորդաշարեր գտնել կերպարվեստի, գրականության, ժողովրդական ու դասական երաժշտության, թատրոնի անցյալի ու ներկայի մասին: «Արմենիայի» ու Հանրայինի լեզվապահպան հաղորդումները իսկապես ազնիվ գործ են անում, բայց տպավորություն կա՝ բոլոր եթերները, հատկապես «էֆ-էմ»-ականները, քիչ բան են սովորում այդ հաղորդումներից: Իսկ մեր մայրաքաղաքի օտարագիր ցուցանակների կողքին ծվարած հայերենը իր այդ կարգավիճակով իսկ հնչեցնում է մշակութային անվտանգության ահազանգ, քանի որ լեզուն ինքնին մշակույթ է, ընդ որում համազգային:

Այս երկիրը ստեղծված է արվեստների համար, եւ մեր օրերի գեղարվեստական միտքն աշխատում է: Հայ գրականության կամ որեւէ այլ արվեստի «անփառունակ վիճակի» մասին աղաղակող նիհիլը ավելի շատ աղաղակողների ինքնահաստատման փորձն է, քան իրական վիճակ, թեեւ բոլոր պրոբլեմների մասին լրջամիտ ու բարձրաձայն խոսելը միայն օգուտներ կարող է բերել: Բայց Երեւանը հնարավոր է դարձնել արվեստների մայրաքաղաք, իսկ Հայաստանը բոլոր կարողություններն ունի այս տարածաշրջանի մշակութային առաջատարների շարքում դասվելու, ինչն էլ կբարձրացնի մեր պետության ու ժողովրդի հեղինակությունը: Այս նպատակն իրագործելու համար եւ ներուժ ունենք, եւ կենսունակ ավանդույթներ: Պրագմատիկորեն ծրագրված քայլերի դեպքում սա միանգամայն հասանելի է:

Փոքր ժողովուրդների մշակույթը շատ ավելի ծանր բեռ ունի: Եվ շատ ավելի խոր առաքելություն: Ես նկատի չունեմ զուտ ազգային ինքնապահպանության գերխնդիրները, թեպետ դրանց մշտական հրատապությունը ոչ մի կասկած չի առաջացնում: Գեղարվեստը հումանիզացնում է մեզ: Նրա վտանգավոր բացակայության կամ տագնապալի նահանջի դեպքում անխուսափելիորեն կոպտանում է հասարակության դիմագիծը: Օզոնային շերտի հուսալիությամբ՝ մշակույթը պաշտպանում է մեզ ապամարդկայնացման որոգայթներից եւ դառնում ուծացման հեռանկարները բացառող իմունիտետ:

Հանձնաժողովի «արդարանալու» ժամանակն է

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի մասին վերջին մեկ ամսվա ընթացքում այնքան խոսվեց, որ նման ուշադրության կնախանձեր անգամ ցանկացած կազմակերպություն: Ձեւակերպումները չափազանց ծայրահեղ էին սկսած «կամակատարներ, ազատ մամուլի բռնակալներ»-ից մինչեւ «ժողովրդավարության պաշտպաններ եւ առաջամարտիկներ»: «Մրցույթն ի սկզբանե շահարկման առիթ դարձավ, եւ մինչ հիմա հանձնաժողովը զրկված էր ավելի լայն պարզաբանումներ տալու հնարավորությունից: Ու քանի որ այս փուլի մրցույթներն ավարտված են, ժամանակն է անդրադառնալ այն բոլոր թյուր կարծիքներին, որ պատեհ-անպատեհ հնչեցին այս գործընթացի առիթով»,-հայտարարեց ՀՌ-ի ազգային հանձնաժողովի նախագահ Գ. Ամալյանը ապրիլի 11-ին հրավիրած մամուլի ասուլիսի ընթացքում:

Այլեւս «Շարմի» եւ «Ա1+»-ի մրցույթին ներկայացրած ծրագրերի գաղտնիության քողը իջեցված է, եւ դրանց «թույլիկ» կամ «ուժեղիկ» լինելու մասին կարող է դատել յուրաքանչյուրս: Ըստ նախագահի, չնայած, «Մելտեքս»ՍՊԸ-ն ծրագիրը հրապարակելու համաձայնություն չի տվել այնուամենայնիվ հետագա տարընթերցումներից խուսափելու համար այս քայլը հանձնաժողովի կողմից անհրաժեշտ է համարվել:

Ասուլիսի ընթացքում հիմնականում անդրադարձ եղավ մեր քաղաքական շատ այրերի արած հայտարարություններին . «Նախապես անհրաժեշտ է պարզաբանել ձեւավորված այն կարծիքը, թե «Ա1+»-ը փակել են, արգելել են: Ոչ ոք ոչինչ չի փակել, եղել է մրցույթ, եւ հաղթող է ճանաչվել մեկ ծրագիր: Սա է մրցույթի տրամաբանությունը»,-37-րդ կապուղու մասին հայտարարեց Գ. Ամալյանը: Նա նաեւ անդրադարձավ Շ. Քոչարյանի այն հայտարարությանը, թե հանձնաժողովը չափերն անցել է եւ չի բարեհաճել ,ըստ օրենքի, մինչեւ մարտի 1-ը ներկայանալ Աժ առաջիկա մրցույթի մասին տեղյակ պահելու համար: Պարոն Քոչարյանը հավանաբար տեղյակ չէ, որ նման դիմում հանձնաժողովը ներկայացրել է 2002 թվականի հունվարի 31-ին. «Նման անպատասխանատու հայտարարությունները հասարակական կարծիք են ձեւավորում եւ պատճառ հանդիսանում այս կամ այն շահարկման համար: Իսկ շահարկումը սկսվել է դեռեւս մինչեւ մրցույթի ծրագրային փաթեթների բացումը, հակառակ դեպքում ինչպե՞ս բացատրել Աժ հանձնաժողովներից մեկի նախագահի հայտարարությունը, որ եթե «Ա1+»-ը փակվի, նշանակում է կա քաղաքական պատվեր»: Այդ դեպքում, ըստ Գ. Ամալյանի, հենց սկզբում պետք էր անձեռնմխելի հայտարարել որոշ ալիքներ եւ բացառել այդ հաճախականությունների համար մրցույթը:

Ողջ ասուլիսի ընթացքում ՀՌ-ի ազգային հանձնաժողովի նախագահը փորձում էր համոզել, որ ոչ մի դեպքում օրենք չի շրջանցվել, մինչդեռ հանձնաժողովի փոխնախագահ Շամիրամ Աղաբեկյանը խուսափեց ամփոփ պատասխանել հայկական եթերում այսօր նկատվող օրենքի խախտումով հեռարձակվող մի շարք ալիքների կարգավիճակի մասին հարցին: Ներկայումս հայկական եթերը ողողված է օտար հեռուստաընկերությունների ամբողջական վերահեռարձակումներով, մասնավորապես CNN-ը, ինչը մեր օրենքների խախտում է, քանզի «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, թույլատրվում է ամբողջականորեն եթեր տրամադրել միայն միջպետական պայմանագրերի առկայության դեպքում, որն այս պարագայում, ըստ տիկին Աղաբեկյանի, բացակայում է: Կամ ոչ պրոֆեսիոնալ, սիրողական, տեխնիկայով հեռարձակվող որոշ հայկական, այսպես կոչված հեռուստաընկերությունների խաղերի որակը...

Հարցեր են, որոնց պատասխաններն առայժմ չկան, եւ թեման շարունակելու է մնալ հասարակական ու լրագրողական քննարկման նյութ:

Կարինե Մանգասարյան

Թատրոնները չեն շտապում

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՆՅԱՆ

«Երկիրը» նախորդ համարներից մեկում տեղեկացրել է, որ անցած տարվա նոյեմբերի 19-ին հանրապետության նախագահը ստորագրել է պետական կազմակերպությունների մասին օրենքը, որի շրջանակներում պիտի իրենց գործունեությունը, ի թիվս մշակութային այլ հիմնարկների, իրականացնեն նաեւ թատրոնները:

«Ասես ճապոներենից թարգմանված մի բան լիներ, եւ թարգմանիչն էլ հայերեն չգիտի: Եթե օրենք պիտի լինի, ուրեմն պիտի ձեւված լինի մեզ հարմար, մեր պայմաններին ու նկարագրին համապատասխան: Հակառակ դեպքում բերում են ինչ-որ եվրոպական հագուստ եւ ստիպում, որ զոռով մեջը տեղավորվենք...»:

Առաջին անգամ թատրոնները պիտի ստանան իրավաբանական անձի կարգավիճակ: Բայց դրա համար անհրաժեշտ է, որպեսզի մշակեն նոր կանոնադրություն եւ ստանան իրավաբանական կարգավիճակ: Նախորդ համարում տեղեկացրել ենք, որ, օրինակ, Օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնը արդեն նոր կարգավիճակով է գործում առանց սեփական կանոնադրությունն ու բանկային հաշիվն ունենալու, ինչը բարդություններ է առաջացրել կոլեկտիվի ֆինանսավորման հարցում: Այս ուղտը եթե ոչ այսօր, ապա վաղը չոքելու է մնացած բոլոր թատրոնների ու մշակութային օջախների դռանը, որոնք, այսպես թե այնպես, պիտի ստանան շահույթ չհետապնդող պետական կազմակերպության կարգավիճակ: Փորձեցինք տեղեկանալ, թե այս իմաստով ինչպիսին է իրավիճակն այլ թատրոններում եւ առհասարակ թատրոնների ղեկավարության օրենքի նկատմամբ վերաբերմունքը:

Որքան էլ տարօրինակ էր, թատրոնների մեծ մասի տնօրենները կամ գեղարվեստական ղեկավարները տեղյակ չէին անգամ հիշյալ օրենքի գոյության մասին: Տեղյակ չէր նաեւ թատերական գործիչների միության նախագահ Երվանդ Ղազանչյանը: Սակայն պրն Ղազանչյանը անդրադարձավ մեկ այլ՝ «Մշակույթի մասին» օրենքին, որի նախնական տարբերակը խոր հիասթափություն էր առաջացրել:

- Ասես ճապոներենից թարգմանված մի բան լիներ, եւ թարգմանիչն էլ հայերեն չգիտի: Եթե օրենք պիտի լինի, ուրեմն պիտի ձեւված լինի մեզ հարմար, մեր պայմաններին ու նկարագրին համապատասխան: Հակառակ դեպքում բերում են ինչ-որ եվրոպական հագուստ եւ ստիպում, որ զոռով մեջը տեղավորվենք,- ասաց Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի գլխավոր ռեժիսորը եւ շարունակեց,- ես մի օրենք գիտեմ բյուջեում հատուկ կետ թատրոնների ֆինանսավորման մասին, մնացածը սուտ բան է:

Պետական երիտասարդական կամերային թատրոնի գեղարվեստական ղեկավար Արա Երնջակյանն ասաց, որ թեպետ իրենք հրավիրված են եղել նախարարություն՝ օրենքի քննարկմանը մասնակցելու, այնուամենայնիվ, ամեն ինչ չէ, որ թատրոնների ղեկավարների համար հստակ է:

- Առանց այդ էլ 3-4 ամիս ֆինանսավորում չենք ստացել,- ասում է պրն Երնջակյանը,- եւ հիմա էլ այս կարգավիճակի հարցն է մեջտեղ եկել. էլի մի 3-4 ամիս չենք ստանա ոչինչ:

Կամերայինի գեղարվեստական ղեկավարը ավելացրեց նաեւ, որ օրենքը բազում հարցականներ է առաջ բերում: Տարօրինակ է մեր թատրոնների ղեկավարների պահվածքը: Ասում են, թե տեղյակ չեն՝ ինչի մասին է խոսքը, սակայն չեն շտապում իրենց իրավական կարգավիճակը համապատասխանեցնել օրենքի պահանջին՝ խուսափելու համար ավելորդ բարդություններից եւ ֆինանսավորման ձգձգումներից:

Անգլերեն միակ ակադեմիականը

Վահե Օշականի որդին՝ Հայկը, մտավորականների օշականյան ավանդների ժառանգորդն ու արժանավոր հեւնորդը լինելուց զատ, նաեւ արդեն 60 տարի հրապարակվող «Armenian review» հանդեսի գլխավոր խմբագիրն է, ուստի նրա հետ զրույցի թեման հենց վերահրապարակվող հանդեսն է:

- Պատմեք, խնդրում եմ, այն հանդեսի մասին, որի գլխավոր խմբագիրն եք: «Armenian review»-ն, որքան գիտեմ, երկար տարիներ հրատարակվելուց հետո դադարել էր տպագրվել, եւ հիմա վերստին տպագրվո՞ւմ է:

- «Armenian review»-ն անգլերեն լեզվով հրատարակվող միակ ակադեմիական հանդեսն է, որ մենք ունենք: «Մենք» ասելով նկատի չունեմ Դաշնակցությանը, այլ ողջ հայությանը: Սկսել է հրատարակվել 40-ականներին եւ կանոնավոր կերպով լույս է ընծայվել եռամսյա պարբերականությամբ: Տարիների ընթացքում փոխվելով մոտ 20 տարի առաջ վերածվել է ակադեմիական հանդեսի: Ակադեմիական հանդես ընդունված ամերիկյան չափանիշներով: Օրինակ, ես որպես գլխավոր խմբագիր, չեմ կարող մերժել կամ հաստատել խմբագրություն ուղարկված որեւէ հոդված: Նախ, հոդվածը, առանց հեղինակի անվան, ուղարկվում է գրախոսվելու ժյուրիին կամ այստեղի հասկացությամբ գիտխորհրդին: Նրանց դիտողություններով հանդերձ, հոդվածը վերադարձվում է հեղինակին եւ խորհուրդ տրվում կատարել համապատասխան փոփոխություններ: Եթե դիտողությունները, քննադատությունը ընդունելի են հեղինակի համար, ապա արդեն ես եմ որոշում վերափոխված տարբերակը կրկին տալ գրախոսմա՞ն, թե՞ համարել արդեն տպագրության պատրաստ: Որքան կարեւոր է հրապարակման թեման, այնքան երկար է տեւում այս գործընթացը: Սա ամենաօբյեկտիվ ձեւն է հոդվածների ընտրության լինի արվեստաբանական, գրական, գիտական, բժշկական, պատմական, ինչ էլ որ լինի: 20 տարուց ավելի է, որ «review»-ն այս կարգով է հրատարակվում:

- Կարելի՞ է իմանալ, թե ովքեր են ժյուրիի անդամները, այսինքն՝ այն մետրերը, որոնք որոշում են այս կամ այն հոդվածի ճակատագիրը:

- Նրանք տվյալ բնագավառի նշանավոր մասնագետներ են: Եթե դարձյալ որեւէ հոդված է եղել, ասենք Ցեղասպանության մասին, կամ, ասենք, նախորդ համարը ամբողջությամբ վերաբերում էր Սասունի ջարդերին. ո՞ւմ պիտի տայինք քննադատության, գրախոսության, եթե ոչ Ռիչարդ Հովհաննիսյանին կամ Վահագն Տատրյանին: Նրանք են, որ պիտի գնահատեն այդ բնույթի հոդվածները, սակայն առանց իմանալու, թե ով է հեղինակը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ԱՄՆ-ում եւ առհասարակ աշխարհում ընկալվել որպես լուրջ ակադեմիական հանդես: Նման մեթոդը աշխարհի ակադեմիական շրջանակների համար ավելի ընդունելի է, քան եթե խմբագիրը որոշի այս կամ այն հոդվածը տպագրել, կամ ոչ: Մեր գլխավոր պայքարներից մեկը, որը նույնպես ակադեմիական մակարդակի վրա է, Հայ Դատի խնդիրն է: Սա ամենակարեւոր խնդիրներից մեկն է:

- Կարելի՞ է ասել, որ հանդեսի գլխավոր նպատակը Հայ Դատի հետապնդումն է:

- Ոչ միայն: Հանդեսը դաշնակցությանն է, բայց միեւնույն ժամանակ ակադեմիական է:

Հայ Դատը հանդեսի, այսպես ասած կարմիր թելն է շատ նուրբ խնդիր, որի հանդեպ չափազանց ուշադիր պիտի լինել: Սակայն հենց Հայ Դատին վերաբերող կամ Ցեղասպանության խնդիրը հետապնդող որեւէ հոդված մեզ համար ընդունելի է դառնում իր գիտական արժանիքների հիման վրա եւ ոչ թե քաղաքական այս կամ այն որոշմանը իր համապատասխանությամբ:

- Բայց հանդեսի վերջին համարը ամբողջությամբ Սասունի ջարդերին էր վերաբերում, հաջորդը, նույնպես ամբողջությամբ Սերգեյ Փարաջանովին: Նախ՝ ինչպե՞ս հասկանալ բովանդակային այս տարաբնույթ շեղումը, եւ արդյո՞ք սկզբունք է համարը ամբողջությամբ որեւէ թեմայի նվիրելը:

- Հանդեսը տպագրվում է երկու ձեւով էլ: Երբեմն-երբեմն, երբ որեւէ թեմայի շուրջ հարուստ նյութ է հավաքվում «Review»-ն ամբողջությամբ նվիրում ենք այդ թեմային: Կամ էլ համարը կարող է չունենալ որեւէ կոնկրետ թեմա եւ ընդգրկել մեր հետաքրքրության շրջանակներում տեղավորվող ցանկացած նյութ: Համարից համար շարունակվող նյութեր չպիտի լինեն, որովհետեւ դա եւս դեմ է ակադեմիականության չափանիշներին: Վերջին հատորը, այո, ամբողջությամբ Սասունի ջարդերին էր նվիրված, իսկ հաջորդը կամ ամբողջությամբ Փարաջանովին կնվիրվի, կամ էլ տարաբնույթ համար կլինի: Փարաջանովի արվեստին եւ անձին վերաբերող, նաեւ կրած հալածանքների մասին բազմաթիվ հոդվածներ ունենք: Մյուս կողմից, ԱՄՆ-ում եւ ամբողջ աշխարհում մեծ հետաքրքրություն կա Փարաջանով արվեստագետի ու նրա ստեղծագործության հանդեպ: Բայց դեռ հստակ չէ, որ հաջորդ համարն իսկ Փարաջանովին պիտի վերաբերի:

- Ո՞ւմ է ուղղված հանդեսը՝ անգլերենին տիրապետող հայերի՞ն, թե՞ օտարներին:

- Եվ մեկին, եւ մյուսին, բայց ավելի շուտ օտարներին: Ավելի քան 100 նշանավոր համալսարաններ մեր բաժանորդն են եւ հանդեսը գնում են իրենց գրադարանների համար: Այսինքն որեւէ համալսարան պիտի գնահատի հանդեսը, որպեսզի վճարի եւ մշտական բաժանորդ դառնա: Այս իմաստով, որպես Հայ Դատի գործ, կարեւոր է, որ նշանավոր համալսարաններն ստանան մեր հանդեսը, եւ այնտեղից քաղեն պատմության կամ Ցեղասպանության շուրջ իրենց հետաքրքրող տեղեկատվությունը: Այժմ աշխատում ենք տպաքանակը եւ բաժանորդների թիվն ավելացնելու ուղղությամբ: 10 տարի առաջ ունեինք 800 բաժանորդ, հետո, ընդհատումների պատճառով, այդ թիվը նվազեց մինչեւ 400-ի: Այժմ 500 բաժանորդ ունենք, բայց մտածում ենք, որպես բաժանորդների, առաջին հերթին ավելացնել հենց համալսարանների թիվը:

Հարցազրույցը՝ Հ. ԵՐԱՆՅԱՆԻ

ԼԵՔՔԵՐ ԼԵՔՔԵՐ

Արժեքավոր աշխատություն

Արդեն մի քանի անգամ առիթ ենք ունեցել անդրադառնալու «Սարգիս Խաչենց» հրատարակչության գործունեությանը: Հրատարակչություն, որը մեր իրականությանը, մեր այսօրվան առաջին հայացքից անպատեհ թվացող էլիտար գրականություն է լույս աշխարհ հանում:

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԵՐԱՍԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԲՆՈՒՅԹԸ

ԷՍԹԵՏԻԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

«Իմացություն» մատենաշարի հերթական արժեքավոր գիրքը արվեստագիտության դոկտոր Հենրիկ Հովհաննիսյանի «Դերասանի արվեստի բնույթը» աշխատությունն է, որն օրերս դրվեց ընթերցողի սեղանին: Գիրքը ենթավերնագրված է «էսթետիկական քննություն», եւ դերասանի արվեստի զգայաբանական ակունքների ուսումնասիրությունն է ու որպես այդպիսին առաջինը ոչ միայն հայ, այլեւ համաեվրոպական արվեստագիտական մտքի պատմության մեջ:

«Լսե՞լ եք երբեւէ սիրող քիմիկոս, սիրող բժիշկ,- հեղինակը մեջբերում է իր ուսուցչի Արմեն Գուլակյանի հարցը,- իսկ ինչո՞ւ սիրող դերասան: Կա՞ թեկուզ մեկ երաժշտագետ, որ ծանոթ չլինի դաշնամուրին, կամ չափագրող ճարտարապետ, որ ի վիճակի չէ նախագծել մի պարզ շինություն: Բայց թատերագետն ահա քննում է ու դատում բեմը, ուր երբեք չի եղել»,- կարդում ենք գրքի նախաբանում:

Թեպետ հեղինակն իր աշխատությունը գնահատում է ոչ որպես ցուցում կամ որպես դասագիրք դերասանի համար, այնուամենայնիվ, գիրքը դասագիրք է իր արվեստի էության ակունքները քննող տաղանդավոր դերասանի համար: Այն դերասանի համար, որը կարիք կգգա թատրոնը դիտել որպես անիրական ներկայություն, որպես միայն դերասանի եւ հանդիսատեսի մտահայեցության մեջ գոյություն ունեցող երեւույթ:

Գիրքն սկսվում է բեմի որպես տիեզերքի դետերմինանտի պատկերմամբ եւ վերջանում խաղի գաղափարի վերլուծությամբ: Խաղի գաղափարը որպես թատերական արվեստի երեւույթ, նույնպես առաջին անգամ է քննվում: Պատահական չէ, որ այն գրքում մի ամբողջ գլուխ է զբաղեցնում: Գրքի նախաբանում մեջբերված է արդեն լուսահոգի արվեստաբան Վիլհելմ Մաթեւոսյանի այս բնորոշումը. «Նորություն է, շոշափում է արվեստի մարմինը... Արվեստի զուտ արտաքին, ֆիզիկական կերպի ու երեւույթի մասին չէ խոսքը, այլ նրա ինքնին էսթետիկականը դրսեւորող կազմակերպվածքի ու նախահիմքում կայուն, թեպետ եւ պատմականորեն կերպափոխվող բաղադրիչների»: Այ սա է, որ նոր է, եւ ոչ միայն մեզանում:

Հ. Ե.

Իսրայելի պետական ահաբեկչությունը

Ներկայացվող հոդվածի հեղինակը հրեա ընդդիմադիր քաղաքական գործիչ Էլի Գրինբերկն է: Նա խստորեն դատապարտում է Իսրայելի վարչապետ Արիել Շարոնին եւ պաղեստինցիների հանդեպ այդ երկրի վարած քաղաքականությունը համարում է պետական ահաբեկչություն: Հոդվածը տպագրվել է «Թիկուն» պարբերականի ապրիլի 1-ի համարում:



Լուսանկարը ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՈՒՅԹԸՐ

Ո՞րն է տարբերությունը պետական ահաբեկչության եւ անհատ ահաբեկչի արարքների միջեւ: Եթե հասկանանք այդ տարբերությունը, կհասկանանք նաեւ Միջին Արեւելքում ամերիկյան քաղաքականության բացասական դերը եւ հետագա աղետները: Երբ Յասեր Արաֆաթը իսրայելական ուժերի կողմից պաշարվեց իր նստավայրում եւ պատանդ դարձավ նրանց ձեռքին, նրան շարունակ ճնշեցին ահաբեկչությունը չդատապարտելու եւ դրա դեմ չպայքարելու համար: Իսրայելի պետական ահաբեկչությունը Միացյալ Նահանգների պաշտոնատարների կողմից ներկայացվում է իբրեւ «ինքնապաշտպանություն», մինչդեռ պաղեստինյան անձնասպանները կոչվում են «ահաբեկիչներ»:

Համենայնդեպս, Շարոնի գործած ոճիրների պատասխանատվությունն ամբողջովին անտեսվում է: Ո՞վ պետք է ձերբակալվի մոտավորապես 100 պաղեստինցու սպանության համար: Ո՞վ պիտի բանտարկվի ավելի քան 120 պաղեստինցի բժիշկների մահվան համար: Ո՞վ պիտի դատվի վերջին 18 ամսվա ընթացքում ավելի քան 1200 պաղեստինցու մահվան եւ ավելի քան 3 միլիոն քաղաքացիների հավաքական պատիժների համար: Եվ ո՞վ պետք է միջազգային դատական ատյան կանչվի պաղեստինյան բռնագրավված տարածքներում անօրեն կերպով հաստատվելու եւ ավելի քան 35 տարի ՄԱԿ-ի օրենքներին չենթարկվելու համար:

Անձնասպանական գործողությունները չեն կարող համեմատվել այն պետական ահաբեկչության հետ, որ գործում է Իսրայելի կառավարությունը: Առաջինը մի ժողովրդի հուսահատական արարքներ են, որը ապագա չի տեսնում եւ անտեսված է անարդարացի ու խեղաթյուրված միջազգային հասարակական կարծիքի կողմից:

Անձնասպանական գործողությունները չեն կարող համեմատվել այն պետական ահաբեկչության հետ, որ գործում է Իսրայելի կառավարությունը: Առաջինը մի ժողովրդի հուսահատական արարքներ են, որը ապագա չի տեսնում եւ անտեսված է անարդարացի ու խեղաթյուրված միջազգային հասարակական կարծիքի կողմից:

Վերջինը աշխարհի գերիշխող ուժի կողմից կատարելապես զինված, ֆինանսավորված եւ հովանավորված պետության եւ զավթիչ զինվորականության անզգամ ու «բնական» որոշումների արդյունքն է: Մինչ հասարակական կարծիքը պետական ահաբեկչությունը եւ անձնասպանական անհատական գործողությունները համեմատության ենթակա ահաբեկչության պարագաներ չի դիտում, Իսրայելի կառավարության գործած պետական ահաբեկչությունն ու պատերազմական ոճիրները իբրեւ «ինքնապաշտպանություն» օրինական են համարվում, եւ Արաֆաթից պահանջում են պաշարված վիճակում անգամ ձերբակալել ահաբեկիչներին:

Ուզում եմ հարցնել՝ ո՞վ պիտի ձերբակալի Շարոնին պաղեստինցիների սպանության հրահանգների գլխավոր պատասխանատուին: Ե՞րբ պետք է նա էլ ահաբեկիչ համարվի: Աշխարհը մինչեւ ե՞րբ պիտի անտեսի պաղեստինցիների ազատության եւ անկախության կոչերը: Աշխարհը ե՞րբ է սկսելու չանտեսել այն իրողությունը, որ Իսրայել պետության նպատակը անվտանգությունը չէ, այլ պաղեստինցի ժողովրդին մշտապես գավթված պահելն ու իր լծին ենթարկելը:

Իբրեւ ընդդիմադիր հրեաներ մենք պայքարում ենք մեր պետության դեմ, սակայն միջազգային այն զորակցությունը, որ ստանում է Շարոնը, շարունակ վտանգում է մեր պայքարը: Միջազգային կարծիքը պետք է ճիշտ կողմնորոշվի, եւ ՄԱԿ-ը պետք է ուժեր ուղարկի կանխելու համար արյունահեղությունը եւ իրավիճակի էլ ավելի վատթարացումը: Հրեաներին ու պաղեստինցիներին չափազանց անհրաժեշտ են միջազգային հանրային կարծիքի արթնացումը եւ արդարացի համաշխարհային վերաբերմունքը: Դրանք անհրաժեշտ են թե մեր կյանքը փրկելու (բառիս բուն իմաստով) եւ թե մեր ապագայի հանդեպ հույսերի ամրապնդման համար:

ՎՐԱՍՏԱՆ

Վրաստանը շարունակում է խտրությունը

Վրաստանը հայտարարում է, որ այս փուլում ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող միջազգային կոնվենցիայի վավերացումը սպառնում է երկրի անվտանգությանը: Այս մերժումը կարող է լուրջ հետեւանքներ ունենալ Թբիլիսիի համար:

Ըստ «Ազատության», Եվրախորհուրդը կոչ է անում Վրաստանի իշխանություններին՝ կատարել դեռեւս 1999 թվականին ստանձնած պարտավորությունները եւ վավերացնել համապատասխան պայմանագիրը:

Տարածաշրջանային այցով Թբիլիսիում գտնվող Եվրախորհրդի նախարարների խորհրդի նախագահ, Լիտվայի արտգործնախարար Անտանաս Վալիոնիսը այս առթիվ իր խոր մտահոգությունն է հայտնել:

Սակայն Եվրախորհրդում Վրաստանի ներկայացուցիչ Լանա Գոգոմբերիձեի մեկնաբանության համաձայն՝ այսօր Թբիլիսին չի կարող հետեւել Եվրախորհրդի կոչին, քանզի պարտավորվելով պաշտպանել ազգային փոքրամասնությունների իրավունքները՝ Վրաստանն իրականում կվտանգի երկրի տարածքային ամբողջականությունը: Իբրեւ փաստարկ, տիկին Գոգոբերիձեն նշել է, թե Վրաստանի դեպքը հատուկ է, եւ եվրոպական ընդհանուր մոտեցումները չի կարելի անփոփոխ կերպով կիրառել այդ երկրում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Հայկական համայնքը՝ դժվարությունների առաջ

Պաղեստինյան գրավյալ տարածքներում իսրայելական զինված ուժերի գործողություններն իրենց մեջ լուրջ սպառնալիք են պարունակում նաեւ Երուսաղեմ, Ռամալլա, Բեթղեհեմ քաղաքների խաղաղ բնակչության համար: Ինչպես մեզ տեղեկացրին Հայ Դատի հանձնախմբից, հիշյալ քաղաքների հայ համայնքը եւս տեղացիների նման ստիպված է դիմագրավել նույն դժվարությունները: Առանց որեւէ խտրության իսրայելցի զինվորականները զանգվածային ստուգումներ են կատարում փողոցներում, խաղաղ բնակչությանը ամեն առիթով հարկադրում փակված մնալ բնակարաններում:

Գրասենյակի խոսնակը տեղեկացրեց, որ իրավիճակն առավել լարված է Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան եկեղեցու շրջակայքում: Այդ տարածքը, ուր կենտրոնացած է նաեւ հայկական համայնքը, դարձել է պատերազմական գործողությունների թատերաբեմ: Եկեղեցին պաշարողական դրության մեջ է: Երեկվա դրությամբ մի քանի տասնյակ քրիստոնյաներ դեռեւս գտնվում էին շրջափակման մեջ: Նրանց ու պաշարման մեջ հայտնված եւս հինգ հայ եկեղեցականների հետ կապը, ինչպես ասել են Երուսաղեմի Հայոց պատրիարքարանից, գործում է միայն հեռախոսի միջոցով: Պաշարվածները տեղեկացրել են, որ խմելու ջրի եւ ուտելիքի խիստ պակաս է զգացվում: Երկու օր առաջ ծանր իրադրության մեջ հայտնված մարդկանց հաց ու ջուր տանելու պահին եկեղեցու դռան մոտ ուսից հրազենային վերք է ստացել մի հայ վարդապետ եւ տեղափոխվել հիվանդանոց:

Ինչ վերաբերում է Երուսաղեմի իրադրությանը, ապա այն առավել տանելի է: Հիմնական գործողությունները ծավալվում են քաղաքի արաբական թաղամասերում: Փակ են հին Երուսաղեմում գտնվող հայկական վարժարանը եւ բոլոր հայերի վաճառատները: Գործում է միայն Հայոց պատրիարքարանը, որը, Հայ Դատի հանձնախմբի պատասխանատու Հակոբ Սեւանի գնահատմամբ, ամենապահով վայրն է: Հենց այստեղից էլ ղեկավարվում է հայ համայնքն իր միություններով ու հասարակական կազմակերպություններով: Վերջիններս ուշի ուշով հետեւում են քաղաքական եւ ռազմական իրադարձություններին, առանց ժողովներ գումարելու հնարավորության ծրագրեր են մշակում եւ ձեռք ձեռքի տված փորձում դիմագրավել հայ համայնքի առջեւ ծառացող դժվարությունները:

Մեր այն հարցին, թե ո՞վ եւ ինչպե՞ս է համակարգում հայկական հաստատությունների գործողությունները, գրասենյակի պատասխանատուն միանշանակ հայտարարեց. «Համայնքի պաշտոնական կեցվածքը Հայոց պատրիարքարանի դիրքորոշումն է: Այն է չեզոքություն պահպանել ծավալվող իրադարձությունների հանդեպ: Հայությունն այստեղ միայն կողմ է խաղաղության եւ արդարության»:

Գրասենյակի խոսնակը նաեւ ընդգծեց, որ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանը գործում է տեղի հունաց եւ լատինաց առաջնորդարանների հետ համատեղ: Նրանք հանդես են գալիս որպես քրիստոնեական մեկ համայնքի ղեկավարություն, տարածում համատեղ հայտարարություններ, փորձում երկխոսություն հաստատել Իսրայելի եւ Պաղեստինի ղեկավարության հետ:



Ի սփոփանք ամենքիս, Հակոբ Սեւանը նաեւ նշեց, որ հայ համայնքի ներկայացուցիչների շրջանում իսրայելա-պաղեստինյան հակամարտության վերջին սաստկացումների ժամանակ այլ վիրավորներ եւ զոհեր չկան:

Էդ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Սկիզբ ֆուտբոլային մարաթոնի

Եվրոպական ֆուտբոլային խաղադաշտերում վաղուց եռուզեռ է. անցկացվում են ազգային առաջնություններ, իսկ մենք նոր ենք արթնանում նիրհից: Ինչեւէ, կարեւորն այն է, որ վաղը ի վերջո կմեկնարկի 2002 թվականի Հայաստանի առաջնությունը:

Գագիկ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Գլխավոր մարզիչ Անդրանիկ Ադամյանը հավաստիացրել է, որ Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում մեր հավաքականը պայքարելու է 2-րդ տեղի համար: Կարծում ենք՝ մարզիչն իր խոսքի տերը կլինի, այլապես պատվախնդիր գյումրեցու ասածը պարզապես գլուխգովանություն կհամարվի:

Գաղտնիք չէ, որ խիստ սահմանափակ է մեդալների համար պայքարողների թիվը: Եթե վերաստեղծված «Փյունիկին» հաջողվեց նախորդ մրցաշրջանում փոքր հրաշք գործել՝ առաջին իսկ փորձից դառնալ չեմպիոն, ապա բնական է, ակումբի ղեկավարությունն այս անգամ էլ առաջադրանքը կթողնի նույնը: Անցյալ մրցաշրջանի վերջին «Փյունիկի» շնչառությունը փոքր-ինչ ծանր էր, սակայն թիմը կարողացավ պահպանել առաջատարի դիրքը: Գլխավոր հովանավոր Ռուբեն Հայրապետյանը հնարավորն անում է թիմն ուժեղացնելու համար: Հրավիրվել են արտասահմանցի երեք մարզիչ, մի քանի խաղացող:

Ոսկե մեդալների համար չեմպիոնին, թերեւս, մարտահրավեր նետի Երեւանի «Սպարտակը»: Ակումբի նախագահ Սարգիս Իսրայելյանը դժգոհ էր թիմի՝ 2001 թվականի արդյունքից՝ 3-րդ տեղ: Եվ նոր մրցաշրջանին սպարտակցիները լրջորեն են նախապատրաստվել, մի քանի ուսումնամարզական հավաք են անցկացրել, նաեւ՝ արտասահմանում:

Գյումրեցիների թիմը՝ «Շիրակը» եւս կփորձի ատամ ցույց տալ: Թերեւս, միայն տխուր «պատահականության» հետեւանքով «Շիրակը» 2001 թվականին չարժանացավ մեդալների: Ինչ խոսք, թիմի մարզիչ Անդրանիկ Ադամյանը կփորձի ապացուցել, որ ներկայումս ինքը Հայաստանում ամենահեղինակավոր մասնագետն է եւ իզուր չի ստանձնել նաեւ Հայաստանի ազգային հավաքականի ղեկը:

Եթե «Շիրակը» ապավինում է իր աճեցրած կադրերին, ապա «Միկայի» ղեկավարությունը նախընտրել է դրսից «տղաներ բերելու» քաղաքականությունը: Թիմը, հիրավի, կարելի է ռուսական համարել: Բանն այն է, որ «Միկայի» գլխավոր մարզիչ Վալերի Գլադիլինի հիմնական նեցուկը ռուս բրծված, բայց ոչ երիտասարդ խաղացողներն են: Թիմի հաջողությունը շատ բանով կախված է նրանից, թե Գլադիլինը կկարողանա՞ հարմարվել հայկական ֆուտբոլային միջավայրին եւ ստեղծել միաձույլ կոլեկտիվ:

Ինչ վերաբերում է «Զվարթնոցին», ապա այժմ թիմի գլխավոր մարզիչ Սամվել Ղասաբօղլյանն ստիպված է համատեղ կատարել նաեւ ակումբի նախագահի պարտականությունները: «Զվարթնոցի» համար դժվար կլինի ապացուցել, որ նախորդ մրցաշրջանում Հայաստանի առաջնությունում զբաղեցրած երկրորդ տեղը պատահականություն չէ:

Մեդալների հավակնորդ չի կարելի համարել «Արարատին»: Անառողջ մթնոլորտի, տարաձայնությունների եւ այլ պատճառներով «Արարատը» զրկվեց մի շարք փորձառու խաղացողներից: Այժմ թիմում հեռանկարային երիտասարդ սերունդ է մեծանում, որն իրական դեմքը կարող է ցույց տալ միայն մի քանի տարի հետո:

«Սպարտակի» հետ նույն տանիքի տակ պատսպարված «Բանանցը» փորձառու ֆուտբոլիստներով է համալրված: Այն կարող է ցանկացած թիմի հետ խաղում անակնկալ մատուցել: Նույնը չի կարելի ասել «Լեռնագործի», «Դինամո-2000»-ի եւ «Կոտայքի» մասին: Ֆինանսների պակասը այս թիմերի գլխավոր հիմնահարցն է: Մասնավորապես «Կոտայքը» մեծ «թռիչքի» տեղ ուներ, սակայն երբ հովանավորները երես թեքեցին, թիմի թեւերը կտրվեցին:

Հուսանք, որ հովանավորները նոր մրցաշրջանում «Լեռնային Արցախ» վերանվանված «Ղարաբաղի» կողքին կլինեն, նաեւ անուշադրության չի մատնվի «Լոռին»:

Իսկ ահա, սեպտեմբերին եւ հոկտեմբերին լուրջ փորձություն է սպասում Հայաստանի ազգային հավաքականին Ուկրաինայի եւ Հունաստանի թիմերի հետ մրցամարտերում: Գլխավոր մարզիչ Անդրանիկ Ադամյանը հավաստիացրել է, որ Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում մեր հավաքականը պայքարելու է 2-րդ տեղի համար: Կարծում ենք մարզիչն իր խոսքի տերը կլինի, այլապես պատվախնդիր գյումրեցու ասածը պարզապես գլուխգովանություն կհամարվի:

Թերեւս, մեր ակումբային թիմերին էլ հաջողվի կոտրել սառույցը եւ արգելք հաղթահարել եվրոպական գավաթային մրցաշարերում:

Այնպես որ, ֆուտբոլային մարաթոնը նոր է սկսվում:

ԱՆՑՅԱԼՈՒՄ

Բախտը երես թեքեց

Փաստորեն, ֆուտբոլի Հայաստանի գավաթի խաղարկությունում լուրջ մրցավեճն սկսվում է քառորդ եզրափակիչի հանդիպումներից: Եվ ահա, վիճակահանությամբ որոշվեցին, թե որ թիմերը առաջին խաղում պետք է լինեն հյուրընկալողի դերում: Ընդ որում, ինքնակամ որոշել էին խաղից դուրս լինել, վիճակահանությանը չմասնակցել «Սիկա», «Բանանց», «Դինամո - 2000» թիմերի ներկայացուցիչները:

Թերեւս դրանից էր, որ բախտը երես թեքեց «Սիկայից» եւ «Բանանցից»: Ապրիլի 19-ին այդ թիմերը սեփական հարկի տակ կմրցեն համապատասխանաբար «Շիրակի» եւ «Փյունիկի» հետ: Փաստորեն, պատասխան խաղերում նրանց մրցակիցները հստակ կիմանան անելիքը: Իսկ սեփական հարկի տակ խնդիրներ լուծելն ավելի հեշտ է:

Ապրիլի 20-ին «Զվարթնոցը» ուժերը կչափի «Դինամո-2000»-ի, «Արարատը» «Սպարտակի» հետ: Մրցակից զույգերի հաջորդ հանդիպումները կկայանան ապրիլի 27-ին եւ 28-ին:

Նոր փորձություն

Շախմատի Կալիֆոռնիայի դպրոցականների առաջնությունում իրենց լավագույնս դրսեւորեցին Լոս Անջելեսի համահայկական ակումբի սաները: Նրանցից 7-ը տեղ գրավեցին առաջին տասնյակում, իսկ առաջին երկու հորիզոնականները զբաղեցրին համապատասխանաբար Ալեն Մելիք-Ադամյանը եւ Մինաս Նորդանյանը: Առաջնությանը մասնակցում էր 120 շախմատիստ:

Այժմ նոր փորձություն է սպասում պատանի հայ շախմատիստներին: Երեկ Քենտուկի նահանգի Լուիսվիլ քաղաքում մեկնարկեց ԱՄՆ-ի դպրոցականների առաջնությունը: Պայքարի ոլորտն են ներգրավվել հայկական ակումբի մի խումբ սաներ: Ի դեպ, նրանցից Հարություն Հակոբյանը 11 անգամ դարձել է ԱՄՆ-ի չեմպիոն տարբեր տարիքային խմբերի մրցաշարերում:

Կասպարովը՝ 39 տարեկան

Ապրիլի 13-ին Գարի Կասպարովի ծննդյան տարելիցն է: Ականավոր հայ շախմատիստը կդառնա 39 տարեկան: Թեեւ նա այժմ աշխարհի նախկին չեմպիոն է, սակայն համաշխարհային դասակարգման սանդղակում վստահորեն զբաղեցնում է առաջին հորիզոնականը: Այդպես է արդեն 15 տարի: Սա խոսուն ցուցանիշ է եւ եւս մեկ անգամ հաստատում է, թե ով է աշխարհում ուժեղագույնը:

Գերազանց արդյունք

Լեւոն Արոնյանը, որը վերջին շրջանում բնակվում է Գերմանիայում, փայլուն հանդես եկավ Դացիզաո քաղաքի մարզապալատում կայացած շախմատի միջազգային մրցաշարում: 20-ամյա հայ գրոսմայստերն ինը հնարավորից վաստակեց 7 միավոր եւ 9 շախմատիստների հետ բաժանեց առաջին տեղը: Ըստ գործակիցների, նա 5-րդն էր: Իսկ հաղթող ճանաչվեց Վլադիմիր Եպիշինը:

Ընդ որում, ստուգատեսը մասնակիցների ներկայացուցչական կազմ ուներ: Ուժերը չափող 250 մարզիկների զգալի մասը կրում էր գրոսմայստերի եւ միջազգային վարպետի կոչում:

Բեղմնավոր ուղի, նաեւ՝ նոր դեր

65-րդ գարունը թեւակոխած Սեդրակ Առաքելյանը կեւ դար ֆուտբոլում է: Հանդես է եկել տարբեր թիմերում, երեք տասնամյակ որպես խաղավար ապաստարկել է Հայաստանի, ԽՍՀՄ առաջնության հանդիպումները, արժանացել համամիութենական կարգի մրցավարի կոչման, իսկ վերջին 15 տարին զբաղվում է տեսչական աշխատանքով: Օրերս նրան վստահվեց Ֆուտբոլի Հայաստանի Ֆեդերացիայի նորաստեղծ տեսչական բաժնի պետի պատասխանատու պաշտոնը:

Շատերի նման Սեդրակն էլ ֆուտբոլում առաջին քայլերը կատարել է բակում: Ապա ընդգրկվեց «Աշխատանքային հերթափոխ» ընկերության հավաքականում, մասնակցեց քաղաքային, հանրապետական ստուգատեսների:

Բանակ զորակոչվելուց հետո հանդես եկավ Աստրախանի «Զվեզդա», «Վոլգար» թիմերի կազմում: 1959 թվականին, խաղերից մեկի ժամանակ կոտրեց ոտքը: Սակայն ֆուտբոլից չհեռացավ, մնաց որպես մրցավար: Վարեց շուրջ 1000 խաղ:

Ս. Առաքելյանի ճանապարհը, սակայն, հարթ ու խաղաղ չի եղել: Նա երբեք չի մոռանա 1970 թվականին Սուխումում կայացած «Սպարտակ» (Մոսկվա)-«Դինամո» (Սուխում) հանդիպումը: Գլխավոր մրցավար Առաքելյանը, մոսկվացիների տուգանային հրապարակում կանոնների խախտում արձանագրելով, սկզբում ցույց տվեց 11 մետրանոց նշակետը: Սակայն հաշվի առնելով եզրային մրցավարի կարծիքը, վերանայեց վճիռը: Հետո զղջաց հետեւողականություն չդրսեւորելու համար...

Փորձառու մասնագետի համար դժվար կլինի նաեւ նոր դերում: Այս առումով հետաքրքիր էր նրա կարծիքը:

- Նախկին խորհրդային հանրապետություններից տեսչական բաժին կա միայն ֆուտբոլի Ռուսաստանի Ֆեդերացիայում: Մեր կազմակերպությունում այդպիսի օղակի ստեղծումը, ինչ խոսք, ժամանակի թելադրանքն է: Տեսուչների ուսերին է ծանրացած խաղի նախապատրաստումը, նաեւ մրցավարների աշխատանքի վերջնական գնահատականը: Նորաստեղծ բաժնին լուրջ փորձություն է սպասում: Ֆեդերացիայի ղեկավարությունը բարձրացրել է տեսուչների աշխատավարձը: Յուրաքանչյուր խաղը սպասարկողին հանձնվելու է 60 դոլար: Իսկ տարեվերջին արդյունքներն ամփոփվելու են, եւ երեք լավագույն տեսուչներն որպես պարգեւ համապատասխանաբար ստանալու են 300, 200 եւ 100 դոլար:

- Ինչպե՞ս է կատարվում խաղերի տեսուչների նշանակումը:

- Այդ իրավունքը վերապահված է հատուկ հանձնաժողովին: Վերջնական ցուցակը հաստատում է ֆեդերացիայի նախագահը:

- Տեսչական հանձնաժողովի կայացրած որոշումը բեկանման ենթակա՞ է:

- Իհարկե: Սակայն այդ իրավունքն ունի միայն ֆեդերացիայի գործկոմը:

ԱՊԱԳԻՐ

«Արամ Խաչատրյան» համերգասրահ
Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ

Ապրիլի 12-ին նվագախմբի համերգը
Մենակատար՝ Կարինե Օհանյան (դաշնամուր)
Դիրիժոր՝ Վադիմ Շուբլաձե (Վրաստան)
Ծրագրում՝ Վերդի, Լիստ, Չայկովսկի
Ապրիլի 19-ին ծրագրում՝ Ստեֆան Էլմաս, Սեն-Սանս
Մենակատար՝ Արմեն Բաբախանյան (դաշնամուր)
Դիրիժոր՝ Ալեքսանդր Սիրանոսյան (Ֆրանսիա)
Գլխ. դիրիժոր եւ գեղ. ղեկ. *Էդուարդ Թոփչյան*
Համերգների սկիզբը ժամը 19.00-ին

Հայաստանի պետական կամերային նվագախումբ

Ապրիլի 13-ին նվագախմբի համերգը
Մենակատար՝ Ռոբերտ Մլքեյան
Նվագախմբի հովանավոր՝ Վաչե եւ Թամար Մանուկյաններ
Գեղ. ղեկ. *Արամ Ղարաբեկյան*
Սկիզբը՝ 19.00-ին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ
ТЕАТР АМАЗГАЙН
HAMAZGAYIN THEATRE

Համազգային թատրոն

Ապրիլի 17-ին «Գուցե փրկվենք» Ս. Կոսյան
Գեղ. ղեկ. *Հրաչյա Գասպարյան*
Տնօրեն՝ *Սոս Սարգսյան:*
Ներկայացման սկիզբը՝ 19.00-ին

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոն

Ապրիլի 13-ին «Բեռնարդան եւ նրա աղջիկները» Գ. Լորկա
Ապրիլի 14-ին «Միեր Մկրտչյան» հոբելյանական երեկո
Ապրիլի 18-ին «Բալի այգին» Վ. Չեխով
Գեղ. ղեկ. *Վահե Շահվերդյան*
Ներկայացումների սկիզբը՝ 18.00-ին

Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն

Ապրիլի 12-ին «Չաո» Մ. Սովաժոն:
Սկիզբը՝ 18.00-ին:
Ապրիլի 13-ին, 14-ին Արթուր Ութմազյան «Աստված մեզ հետ» (պոեզիա)
Գեղ. ղեկ. *Արմեն Խանդիկյան:*
Սկիզբը՝ 19.00-ին

Հ. Պարոնյանի անվան կոմեդիայի պետական թատրոն

Ապրիլի 12-ին «Տեր, մի թող մեզ անտեր» Ժ. Անանյան
Ապրիլի 14-ին «Եզոպոս» Գ. Ֆիգյեյ Ռեդո
Ապրիլի 18-ին «Պահանջվում է ստախոս» Դ. Պսաֆաս
Գեղ. ղեկ. *Երվանդ Ղազանչյան:*
Ներկայացումների սկիզբը՝ 19.00-ին

Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոն

Ապրիլի 17-ին «Մանկիկը» Ժ. Լետրազ (մանկական)
Սկիզբը՝ 12.00-ին
Ապրիլի 18-ին «Ինչ տեսավ պալատականը» Ջ. Օրտոն
Ապրիլի 19-ին «Հիշատակման աղոթք»
Գեղ. ղեկ. *Ալեքսանդր Գրիգորյան:*
Ներկայացումների սկիզբը՝ 18.00-ին

Երեւանի կամերային թատրոն

Ապրիլի 13-ին «Տիտանիկ, made im Armenia»
Ապրիլի 14-ին, 19-ին «Կաբարե»
Գեղ.ղեկ. *Արա Երնջակյան:*
Ներկայացումների սկիզբը՝ 19.00-ին

ONE SECOND IS ENOUGH...
ԱՐԿԱԾԸ ԿԸ ՊԱՏԱՀԻ ԵՐԿԱՅՐԿԵԱՆԻ ՄԸ ՄԵՋ...

...BUT WE USE THEM ALL.
...ԻՍԿ ՄԵՆՔ ՆԵՐԿԱՅ ԵՆՔ ԱՄԷՆ ԵՐԿԱՅՐԿԵԱՆ.

ԱՖԻԼ AFHIL

Ա.Ֆիլ-ի Շենք, Գ. Ալիկ, Հեռ. եւ Ֆաքս. (01) 262231-242556-242557
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

ԱՍՏՂԱԳԻՐ

Խոյ - Շափազանց ցավոտ կընդունենք անգամ չնչին փոփոխությունները մտերիմների հետ հարաբերություններում: Սակայն շաբաթվա կեսին մոլորակների ազդեցությունը կհանդարտվի, եւ զուգընկերոջ հետ կսկսվի անվրդով կյանք: Շաբաթվա վերջին հնարավորություն կստեղծվի նոր որակական մակարդակի հասնել մասնագիտության ոլորտում:

Ցուլ - Անցած շաբաթ սկսված հաջող շրջանը շարունակվում է: Ձեր առջեւ բացվում են ամենատարբեր հեռանկարներ ինչպես գործնական, այնպես էլ անձնական կյանքում: Ի դեպ, ապրիլի 15-16-ը նախընտրելի են անձնական հարաբերությունների հաստատման, 17-18-ը կարիերայի կայացման համար:

Երկվորյակներ - Այս աստղակերպի տակ ծնվածների համար չեզոք իրավիճակ է ստեղծվում, իսկ թե ինչպես ս կգնահատեք այն դրական կամ բացասական, կախված է ձեր հավակնությունների մակարդակից: Առավել եւս, որ ստեղծագործական խնդիրների լուծման համար շուտով կոգեշնչվեք եւ անհրաժեշտ աջակցություն կստանաք վերեւից: Ապրիլի կեսերին կհաջողեք թե ստեղծագործական, թե անձնական կյանքում:

Խեցգետին - Տրամադրված եք հասկանալ ուրիշների զգացմունքներն ու պահանջները: Դիվանագիտական ունակությունների եւ բնածին նրբանկատության շնորհիվ հարաբերություններ կստեղծեք նոր մարդկանց հետ եւ հաջողությամբ կշրջանցեք նուրբ հարցերը: Կին-Խեցգետիններն այս շաբաթ կարող են ձեռնարկել ցանկալի երեխայի բեղմնավորումը:

Առյուծ - Շաբաթվա սկզբին հնարավորություն կընձեռվի ուղղել նախկինում թույլ տված սխալները կողակցի կամ բարեկամների հետ հարաբերություններում: Ձեր էմոցիոնալ վիճակը լավագույնը կլինի ապրիլի 17-ին: Շաբաթվա կեսերին կստանաք մեծ գումար եւ անմիջապես էլ շատ հեշտ ու հաճույքով, առանց ափսոսանքի կծախսեք այն:

Կույս - Շատ Կույսերի զգացմունքները դարձյալ վեր կկանգնեն բանականությունից, ինչի պատճառով էլ իրենց զգալ կտան հին պրոբլեմները սիրելի մարդու հետ հարաբերություններում: Արժե ուշադրություն դարձնել առողջությանը, բայց մի օգտվեք դեղամիջոցներից: Կարեւորը լիարժեք քունն է, սննդի ռեժիմը: Փորձիկ արկած ունենալու ճիշտ ժամանակն է:

Կշեռք - Շաբաթը շատ հաջող է մասնագիտական առումով, հատկապես այն Կշեռքների համար, ում գործունեությունը առնչվում է գեղեցկությանը եւ արվեստի աշխարհին: Բաց մի թողեք հնարավորությունը նոր ոլորտում դրսեւորվելու համար: Հաջողությունը կուղեկցի նրանց, ովքեր կուղեւորվեն քանկարժեք կենցաղային տեխնիկա, համակարգիչ կամ ավտոմեքենա գնելու:

Կարիճ - Շաբաթվա սկիզբը երանգավորված է ռոմանտիկ ապրումներով: Ապրիլի 17-18-ին արդեն իրավիճակը կփոխվի, լարվածություն կստեղծվի աշխատանքային կոլեկտիվում: Գործընկերների հետ տարաձայնություններից կարող են խուսափել ոչ ստանդարտ մտածողություն ունեցող Կարիճները: Շաբաթվա վերջին խուսափեք կողակցի հետ հարաբերություններ պարզելուց:

Աղեղնավոր - Այս շաբաթ կդրսեւորվեք որպես հյուրասեր եւ կենսախինդ տանտեր, եւ որ պակաս կարեւոր չէ, հավատարիմ ամուսին: Ամենաբարդ հարցերի լուծման մեջ հաջողությամբ կօգտվեք տնեցիների աջակցությունից: Հանգստյան օրերին ձեր երեխաների համար խաղընկեր եղեք համակարգչային խաղերում կամ խաչբառ լուծելիս: Կարեւորը էությունը չէ, այլ այն, որ փոխադարձաբար զոհ կմնաք:

Այծեղջյուր - Այս շաբաթ շատ Այծեղջյուրներ կարող են անձնատուր լինել հաճույքներին: Նրանք, ի դեպ, կհաջողեցնեն զվարճություններ գտնել նույնիսկ անհարմար տեղերում, ասենք նկարահանման հրապարակում: Եթե նախկինում ինչ-որ տկարություն է եղել, ապա այժմ այն ասես անհետ կորել է:

Ջրհոս - Շաբաթվա ընթացքում կարող եք վերականգնել էմոցիոնալ հավասարակշռությունը: Դուք արժանի եք փոքրիկ հանգստի, թեկուզ ժամկետները չեն համընկնում պաշտոնական արձակուրդի հետ: Մեկ-երկու օր հանգստացեք, բայց հեռու մեկնել պետք չէ: Վերջապես կարող եք զբաղվել ձեր սիրած գործով: Այդ առումով առավել արդյունավետ է շաբաթվա երկրորդ կեսը:

Ձուկ - Ռոմանտիկ տրամադրվածություն կունենաք եւ անպայման կփորձեք բարելավել հարաբերությունները սիրելի մարդու եւ մտերիմ ընկերների հետ: Սակայն շաբաթվա երկրորդ կեսին երազելու ժամանակ չեք ունենա. ղեկավարը ձեր առջեւ խիստ ժամկետներ է որել: Պարտավորեցնում է նաեւ մասնագետի կարգավիճակը, եւ պետք է աշխատել: Շաբաթվա վերջն անցկացրեք նախապես ծրագրած պլանով:



GILDA
SHOES

ԻՏԱԼԱԿԱՆ ՄՈՐԹՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ
ԿԱՆԱՆՑ ԿՕՇԻԿՆԵՐ ԵՒ
ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ

ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ, ԱՐԱՔՍ ՓՈՂՈՑ,
ՀԵՌ. 261127 - 258626

AURIDENT, INC.
Dental Alloys you can depend on.

MOURAD G. KAPLANIAN
Exclusive Distributor

Center Alishan
Bourj Hammoud
Beirut, Lebanon
Phone : 03-263-859
E-mail : nanor@cyberia.net.LB.